Ճանաչի՛ր ինքդ քեզ

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Շաբաթաթերթ «Krtutiun» (education) weekly «Кртутюн» (образование) еженедельник 22.05.2024թ. չորեքշաբթի թիվ 22 (1151)

Սերունդնե՛ր, դուք ձեզ ճանաչեք Սարդարապատից

Սարդարապատ

Հազարամյակների ընթացքում հայ ժողովուրդը մղել է հարյուրավոր ճակատամարտեր, հիմնականում՝ հաղթական: Իրենց նշանակությամբ ամենից հիշարժանը դրանցից երեքն են. **Ավարայրի, Սարդարապատի, Շուշիի**... Եթե **Ավարայրը** մեր հիշողության մեջ մնացած առաջին հայրենական պատերազմն է, նաեւ՝ աշխարհում հանուն հավատի մղված առաջին խոշոր մարտն ընդհանրապես, որ մեզանում մնաց՝ որպես հանուն հայրենիքի անձնազոհության եւ գիտակցված մահի գաղափարական խորհրդանիշ, իսկ **Շուշին** դրան հավելեց նաեւ նոր ժամանակներում մեր չհնացող ազատասիրության վերածննդի ոգին, ապա **Սարդարապատը**, այդ ամենով հանդերձ, առանձնանում է շատ էական, թերեւս մեզ համար ամենից բախտորոշ խորհրդով. նախ՝ **մեզ համար չկան անելանելի վիճակներ, մենք միշտ ուժեղ ենք ավելի, քան պատկերացնում ենք,** եւ հետո՝ **մենք դատապարտված ենք ապավինելու միայն մեր սեփական ուժերին, կարողություններին, հնարավորություններին...** Մեր անհաջողություններն սկսվում են այնտեղ, որտեղ հույսեր ենք փայփայում՝ օգտվելու օտարի բարեկամությունից: Եվ դրան հակառակ՝ չի եղել մի դեպք, երբ մենք համախմբված եւ ինքնուրույն ելնենք վճռական մարտի կամ այլ գործողության եւ ձախողվենք: **Մենք ոչ միայն եզակի ենք մեր տեսակով ու ստեղծածով, այլեւ մենակ ենք մեր ճակատագրով:** Սարդարապատն ապացուցեց, որ այդ մենակությունը նաեւ մեր ազգային իղձերի իրականացման միակ գրավականն է... Մենք լքված էինք, մի կարճ ժամանակահատված՝ թողնված մեր հույսին եւ, թեեւ եղեռնազարկ, արագորեն համախմբվեցինք, հաղթեցինք եւ վերականգնեցինք մեր անկախ պետականությունը: Այն տեւեց ընդամենը երկու տարի, որովհետեւ կրկին ապավինեցինք օտարին...

Ռազմական անկասելի հաղթարշավներն անգամ չեն փարատել մեր *երկմտանքը*. հաղթանակի *պտուղները* փորձել ենք վայելել՝ դարձյալ օտարի՞ միջամտությամբ... Ու այդ հոգեբանությամբ շղթայված՝ մեր հաղթանակները չեն դարձել *շարունակական, վերջնական*...

Սարդարապատը **գոյատեւելու մի պարզ բանաձեւ - խորհուրդ** է պարգեւել մեզ. նախեւառաջ, կրկնենք, ***ապավինել միայն սեփական ուժերին:*** Եւ ապա՝ ամենաաներեւակայելի երազանքն անգամ իրագործելի է մեզ համար, եթե հանդես ենք գալիս ազգի բոլոր շերտերի, ժողովրդի բոլոր հատվածների ***միասնական կամքով:***

Ահա այսպես **Սարդարապատը**, արդեն **106** տարի, փորձում է մեզ խրատել ամենահմաստուն խորհրդով. ***ապագան նրանն է, ով չի կրկնում իր սխալները եւ իր հաղթանակները դարձնում է շարունակական:***

Գ.Մ.



Աշխարհի հետ

Արդար հասարակություն եւ գիտելիքահեն տնտեսություն

Մայիսի 14-16-ը Երեւանում անցկացվել են Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկի (ՎԶԵԲ) 33-րդ տարեկան հանդիպումը եւ գործարար համաժողովը, որի շրջանակում կայացել է *«Հայաստան. ժողովրդավարական պետություն, արդար հասարակություն եւ գիտելիքահեն տնտեսություն, որ գեներացնում է նորարարություն»* թեմայով ներդրումային նիստը: Միջոցառմանը մասնակցել են ՀՀ նախագահ **Վահագն Խաչատուրյանը,** ՀՀ ԿԳՄՍ նախարար **Ժաննա Անդրեասյանը,** ԲՏԱ նախարար **Մխիթար Հայրապետյանը,** Ֆինանսների նախարար **Վահե Հովհաննիսյանը,** ԱԺ փոխնախագահ **Հակոբ Արշակյանը,** Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկի (ՎԶԵԲ) նախագահ **Օդիլ Ռենո-Բասսոն,** Flagship Pioneering ընկերության հիմնադիր եւ գլխավոր գործադիր տնօրեն **Նուբար Աֆեյանը,** *«Սինոփսիս Արմենիա»* ընկերության նախագահ **Երվանդ Զորյանը** եւ այլք:

Համաժողովի շրջանակում կազմակերպված պանելային քննարկմանը ողջույնի խոսքով է հանդես եկել նախարար Ժաննա Անդրեասյանը՝ պետության առաջընթացի գործում կարեւորելով մարդկային կապիտալի եւ կրթության զարգացման առաջնահերթությունը:

շարունակությունը՝ էջ 2

Կառավարության որոշումով

Կստեղծվի սպորտի կառավարման կենտրոն

ՀՀ կառավարությունն այսօրվա նիստում հավանության է արժանացրել *«Սպորտի կառավարման կենտրոն»* փակ բաժնետիրական ընկերություն ստեղծելու որոշումը: Հարցը զեկուցել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար **Ժաննա Անդրեասյանը:**

ԿԳՄՍ նախարարի խոսքով՝ 2023 թվականի դեկտեմբերին Կառավարությունը հաստատել է ՀՀ ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի ոլորտների 2024-2030 թվականների ռազմավարությունը, որի կարեւոր ուղղություններից են սպորտի ոլորտում կառավարման գործընթացների վերանայումն ու որակական բարեփոխումը: ՀՀ կառավարությունը, 2018 թվականի համեմատ, մի քանի անգամ մեծացրել է սպորտին ուղղվող պետական միջոցները, սպորտի զարգացման նպատակով մեծ ինտենսիվությամբ կառուցվում են նոր մարզակառույցներ Երեւանում եւ ՀՀ մարզերում: Կենտրոնի ստեղծման նպատակը մարզակառույցների միասնական գույքային կառավարումն ու սպորտի ոլորտում տարբեր ծրագրերի արդյունավետ իրականացումն է:

«Ընկերությունը կիրականացնի սպորտի զարգացմանը միտված տարբեր ծրագրեր, կհանդիսանա այն միասնական մասնագիտացված կենտրոնը, որը կիրականացնի հանրապետությունում կառուցվող եւ կառուցվելիք մարզակառույցների կառավարման գործառույթը»,- ասել է Ժաննա Անդրեասյանը:

շարունակությունը՝ էջ 5

Արդար հասարակություն եւ գիտելիքահեն տնտեսություն

սկիզբը՝ էջ 1

«ՀՀ կրթության՝ մինչեւ 2030 թ. զարգացման պետական ծրագիրը միակ ռազմավարությունն է մեր երկրում, որն օրենքի կարգավիճակ ունի: Ռազմավարության հիմնական գաղափարն այն է, որ յուրաքանչյուր երեխա տաղանդավոր է, իսկ կրթական համակարգի ամենակարեւոր գործառույթն այդ տաղանդը բացահայտելը, զարգացնելն ու որակյալ կրթական ծառայություն մատուցելն է յուրաքանչյուրին՝ ամբողջ կյանքի ընթացքում: Մենք նաեւ պետք է հավաստիանանք, որ ՀՀ ամբողջ տարածքում ստեղծված կլինեն հավասար նվազագույն պայմաններ՝ որակյալ կրթության ապահովման համար»,- ասել է Ժաննա Անդրեասյանը:

ԿԳՄՍ նախարարն անդրադարձել է նաեւ կրթական համակարգի առջեւ ծառացած մի շարք մարտահրավերներին եւ դրանց հաղթահարման ուղիներին: Ժաննա Անդրեասյանը շեշտել է՝ Հայաստանն այն եզակի երկրներից է, որ ճգնաժամային եւ մարտահրավերային իրավիճակներում երբեւէ չի նվազեցրել կրթական համակարգի ֆինանսավորումը եւ հատկացվող բյուջեն:

«Վերջին տարիների ընթացքում կրթական համակարգի պետական ֆինանսավորումը շարունակաբար ավելացել է, որը փաստում է՝ ՀՀ կառավարությունը, իսկապես, մեծ կարեւորություն է տալիս կրթության ոլորտի բարեփոխումներին: Համակարգային մեծ փոփոխությունները, չնայած բոլոր մարտահրավերներին, ոչ մի րոպե կանգ չեն առել. դրանք ընթացել են՝ գրանցելով դրական արդյունքներ»,- ասել է Ժաննա Անդրեասյանն ու ներկայացրել Համաշխարհային բանկի կողմից հանրակրթության պետական չափորոշչի՝ Տավուշի մարզում փորձարկման արտաքին գնահատման արդյունքները:

Համաշխարհային բանկի կողմից իրականացվել է ուսումնասիրություն՝ գնահատելու Հայաստանում իրականացվող կրթական բարեփոխումներն ու հանրակրթության պետական նոր չափորոշչի

ներդրումը Տավուշի մարզում: Ուսումնասիրությունը փաստել է՝ այն աշակերտները, որոնք երկամյա փորձարարական շրջանակում սովորել են հանրակրթության նոր չափորոշչով եւ ուսումնական ծրագրով, զգալի հաջողությունների են հասել մաթեմատիկայի եւ բնագիտական առարկաների ուղղությամբ՝ ապահովելով վեց ամսվա լրացուցիչ ուսումնառության կրթական արդյունք:

Պանելային քննարկման ընթացքում ԿԳՄՍ նախարարին հարց է ուղղվել նաեւ *«Ակադեմիական քաղաք»* ծրագրի իրականացման մասին, որը, ըստ մասնագետների, ՀՀ կառավարության ամենամասշտաբային նախաձեռնություններից մեկն է: Ժաննա Անդրեասյանը նշել է՝ բարձրագույն կրթության որակի բարելավումը, առանց հետազոտական բաղադրիչի ընդլայնման, անհնար է պատկերացնել: Նախարարի խոսքով՝ գլխավոր թիրախներից մեկը բուհերի խոշորացումն ու գիտահետազոտական ինստիտուտների հետ միավորումն է, որը կապահովի որակյալ աշխատանքների համար անհրաժեշտ միջավայր: Ժաննա Անդրեասյանն այս գործընթացը կարեւորել է նաեւ երիտասարդ գիտնականների ներգրավման առումով:

Նախարարի խոսքով՝ ակադեմիական քաղաքը լինելու է համալսարանական եւ հետազոտական կամպուս՝ անհրաժեշտ բոլոր ենթակառուցվածքներով, որն ապահովելու է որակյալ եւ միջազգային չափանիշներով մրցունակ բարձրագույն կրթության եւ հետազոտության միջավայր: Ընդ որում՝ այն լինելու է ոչ միայն ուսումնական ու գիտական տարածք, այլեւ մտավոր ու մշակութային ժամանցի համար նախատեսված միջավայր: Նախատեսվում է, որ առաջին համալսարանն ակադեմիական քաղաքում իր աշխատանքները կսկսի 5 տարի անց:

Քննարկմանն անդրադարձ է կատարվել նաեւ ոչ ֆորմալ կրթությանը, որը նախարարի դիտարկմամբ՝ առավել զարգացման ու խթանման կարիք ունի:

«Հատկապես՝ կորոնավիրուսի համավարակից հետո պարզ դարձավ, որ ֆորմալ կրթությունը միայնակ չի կարող հաջողության հասնել: Ոչ ֆորմալ կրթության կառուցվածքը, մեթոդները, մոտեցումներն ինչ-որ առումով ինտեգրվել են ֆորմալ կրթությանը: Նախարարությունը համագործակցում է ոչ ֆորմալ կրթություն իրականացնող կազմակերպությունների հետ՝ տարբեր ծրագրերի ուղղությամբ»,- ասել է Ժաննա Անդրեասյանն ու անդրադարձել հատկապես ավագ դպրոցներում FAST հիմնադրամի հետ իրականացվող *«Արհեստական բանականություն»* դասընթացի փորձնական ներդրմանը:

«Հայաստանն առաջին երկրներից է, որ «Արհեստական բանականություն» դասընթացը ներառեց դպրոցական ծրագրում: Սա համագործակցության, իսկապես, շատ լավ օրինակ է: Մեկ այլ համագործակցություն է Սյունիքի մարզում երկու ՔՈԱՖ կենտրոն եւ ԹՈՒՄՈ կենտրոնի հիմնումը: Միաժամանակ, Սյունիքում Կառավարության կողմից դպրոցների վերակառուցման եւ կառուցման ծրագիր է իրականացվում: Այսինքն՝ ոչ ֆորմալ եւ ֆորմալ կրթության ներկայացուցիչները միասին կաշխատեն՝ ի նպաստ մեր երեխաների որակյալ կրթության եւ էկո համակարգի»,- ասել է նախարարն ու կարեւորել նաեւ ոչ ֆորմալ կրթական ծառայությունների արտահանումը միջազգային ասպարեզ:

Պանելային քննարկմանը բանախոսներն անդրադարձել են նաեւ մի շարք այլ հարցերի:

Հայաստանում առաջին անգամ անցկացվող՝ ֆինանսական ոլորտում աննախադեպ այս միջոցառումը մեկ հարկի տակ է համախմբել շուրջ 3000 մասնակցի 74 երկրից, այդ թվում՝ բարձրաստիճան պաշտոնական պատվիրակություններ, միջազգային եւ մասնավոր հատվածի կազմակերպությունների ներկայացուցիչներ, բիզնես առաջնորդներ եւ ֆինանսական ոլորտի փորձագետներ:

Հայաստանում է գտնվում նաեւ ՎԶԵԲ-ում 16 երկրի կառավարիչ: Միջոցառումը կարեւորագույն հարթակ է երկխոսության, կապերի հաստատման եւ փոխգործակցության ձեւավորման համար՝ խթանելու ՎԶԵԲ գործունեության տարածաշրջաններում տնտեսական զարգացումն ու կայունությունը:

ՀՀ ԿԳՄՄՆ
հասարակայնության հետ կապերի
եւ տեղեկատվության վարչություն

Կառավարության որոշումով

Հաստատվել են ասպիրանտուրայի ընդունելության տեղերը

ՀՀ կառավարությունը հաստատել է բուհերի եւ գիտական կազմակերպությունների 2024/2025 ուսումնական տարվա ասպիրանտուրա ընդունելության տեղերը եւ դրանց բաշխումը:

Հետբուհական կրթության քաղաքականության թիրախային խնդիրներից են պետության համար առաջնային ու կարեւորություն ներկայացնող բնագավառներում մասնագետների երիտասարդացումը, մասնագետների կրթության շարունակականության ապահովումը, ներգրավումը գիտական աշխատանքներում, ինչպես նաեւ այդ ուղղություններով երկար տարիների ընթացքում ստեղծված բարձրակարգ գիտական դպրոցի պահպանումն ու հետագա զարգացման ապահովումը:

Որոշման ընդունման նպատակը ՀՀ կառավարության ծրագրով պետության համար առաջնային եւ կարեւորություն ունեցող ոլորտները (ֆիզիկամաթեմատիկական, քիմիական, կենսաբանական տեխնիկական, գյուղատնտեսական, բժշկական գիտություններ), ինչպես նաեւ բուհերի եւ գիտական կազմակերպությունների ամբիոնները համապատասխան մասնագետներով ապահովելն է:

2024/2025 ուստարվա ասպիրանտուրա ընդունելության նպաստի ձեւով ուսման վճարի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերը՝ ըստ մասնագիտությունների ձեւավորելիս հաշվի են առնվել.

- գերատեսչությունների ներկայացրած հայտերը,

- հավանական գիտական ղեկավարների գիտաչափական տվյալները (հրապարակված հոդվածներ, գիտական աստիճան եւ այլն), բուհերի կամ գիտահետազոտական կազմակերպությունների ամբիոններում հիմնական աշխատողների թվաքանակը, տարիքային շեմը (65-ից բարձր), սովորող ասպիրանտների թիվը, ինչպես նաեւ անհրաժեշտ համապատասխան մասնագետների քանակը,

- բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող ուսհաստատություններում մագիստրոսի բարձր առաջադիմություն ունեցող շրջանավարտների թիվը, ինչպես նաեւ մասնագիտությունների թիվը, որոնցով բուհերն ու գիտահետազոտական ինստիտուտներն իրականացնում են ասպիրանտական կրթական ծրագիր,

- նախորդ տարիներին հատկացված տեղերի եւ փաստացի ընդունելության արդյունքների վերլուծությունը (թափուր տեղեր, համալրված տեղեր),

- մրցույթի արդյունքում թափուր տեղերի առաջացման պատճառները:

2024/2025 ուսումնական տարվա ասպիրանտուրայի ընդունելության համար կհատկացվի 270 անվճար տեղ, որից 180-ը՝ առկա, 90-ը՝ հեռակա: Պետական կրթաթոշակով, նպաստի ձեւով ուսման վճարի լրիվ փոխհատուցմամբ եւս 35 տեղ նախատեսված է միջպետական համաձայնագրերով:

Նախորդ ուսումնական տարվա համեմատ՝ ավելացվել են ե՛ւ առկա ե՛ւ հեռակա ուսուցմամբ ասպիրանտուրայի ընդունելության տեղերը, ընդ որում՝ 2024/2025 ուսումնական տարում բնական եւ տեխնիկական գիտություններին տրամադրվել է առկա ուսուցման ասպիրանտուրայի ընդունելության համար հատկացված ընդհանուր տեղերի 62 %-ը, իսկ հեռակա ուսուցման ընդհանուր տեղերից՝ 42 %-ը:

Տեղերի թիվն ավելացել է՝ հիմք ընդունելով *«ՀՀ կրթության՝ մինչեւ 2030 թվականի զարգացման պետական ծրագիրը» հաստատելու մասին»* օրենքով եւ դրանից բխող գործողությունների ծրագրով սահմանված թիրախները, այն է՝ ասպիրանտուրային հատկացվող պետական ֆինանսավորման ավելացում եւ ասպիրանտների թվի կտրուկ աճ՝ ապահովելու պետության համար առաջնահերթություն եւ կարեւորություն ներկայացնող ոլորտներում հիմնարար ու կիրառական գիտական հետազոտություններ իրականացնելու նպատակով երիտասարդ մասնագետների ներգրավումը, ինչպես նաեւ նպաստելու գիտության ոլորտում սերնդափոխությանը եւ գիտական ներուժի զարգացմանը:

Հ. ՅՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Աշխարհի հետ

Գրականությունը՝ ազգերի ավանդույթների շտեմարան

Թուրքմեն բանաստեղծ Մախթումկուլի Ֆրագիի ծննդյան 300-ամյակին նվիրված՝ մշակույթի նախարարների միջազգային խորհրդաժողովի շրջանակում ՀՀ ԿԳՄՍ նախարար **Ժաննա Անդրեասյանը** հանդես է եկել զեկույցով, ինչպես նաեւ վարել է խորհրդաժողովի հերթական սեկցիան՝ *«Մախթումկուլի Ֆրագի եւ համաշխարհային մշակույթ»* թեմայով:

ԿԳՄՍ նախարարը, ողջունելով ներկաներին եւ կարեւորելով թուրքմենական նոր գրականության հիմնադիր Մախթումկուլի Ֆրագիի գրական ժառանգությունը, ընդգծել է՝ որպես մշակութային տեղեկատվության անփոխարինելի աղբյուր՝ գրականությունն ընդգրկում է տարբեր հասարակությունների, ավանդույթների եւ արժեքների համադրությունը:

«Գրականությունն արժեքավոր հնարավորություններ է տալիս ուսումնասիրելու ազգերի ավանդույթները, հավատալիքներն ու փորձառությունները՝ դրանք փոխանցելով սերունդներին: Ֆրագիի պոեզիան թուրքմեն ժողովրդի մարտահրավերների, հավակնոտ երազանքների եւ հաղթանակների մանիֆեստն է: Մենք՝ հայերս, ծանոթ ենք նրա արժեքավոր ստեղծագործություններին 1950-ական թվականներից եւ կարողացել ենք բազմաթիվ զուգահեռներ անցկացնել նույն շրջանի հայ գրականության ժառանգության հետ»,- նշել է Ժաննա Անդրեասյանը՝ այս համատեքստում ընդգծելով Սայաթ-Նովայի հարուստ ու գեղեցիկ գրական ժառանգությունը:

Նրա խոսքով՝ գրական լեզվի վերագնահատումը, փոխակերպումը եւ զարգացումը Ֆրագիի նշանակալի ներդրումն է իր ժողովրդի մշակույթում, որով նա թուրքմենական բանաստեղծական լեզուն ավելի հասկանալի է դարձրել ընթերցողին: ԿԳՄՍ նախարարը նաեւ ընդգծել է՝ նմանօրինակ խորհրդաժողովները կարող են դիտվել որպես գրականությունը համաշխարհային ժառանգության մաս դարձնելու առաքելության ըմբռնման:

Մասնագիտական կրթություն եւ ուսուցում

Կիրականացվի գործընկերային գնահատում

Եվրոպական կրթական հիմնադրամի փորձագետները կիրականացնեն Հայաստանի ՄԿՈՒ համակարգի գործընկերային գնահատում՝ մատնանշելու մարտահրավերները: Այդ թեմայով Արմենպրեսի լրատվական կենտրոնում տեղի է ունեցել մամուլի ասուլիս՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ **Արաքսիա Սվաջյանի,** Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի տնօրեն **Ռուբեն Թոփչյանի** եւ Եվրոպական կրթական հիմնադրամի ֆորումի ղեկավար **Մունիր Բաատիի** մասնակցությամբ:

Արաքսիա Սվաջյանը կարեւորել է նախատեսվող գործընթացը, որը, նրա խոսքով, եւս մեկ հնարավորություն է՝ ՄԿՈՒ ոլորտում որակի բարելավմանն ուղղված աշխատանքները գնահատելու եւ քարտեզագրելու, այն համադրելի դարձնելու այլ երկրների կրթական գործընթացներին, ինչպես նաեւ հասկանալու՝ ինչպիսի փոփոխությունների կարիք կա: *«Այս շաբաթ Ազգային ժողովը երկրորդ ընթերցմամբ կքննարկի «Մասնագիտական կրթության եւ ուսուցման մասին» օրենքի նախագիծը, որը բազմաթիվ փոփոխություններ է ենթադրում այս ոլորտում: Մասնավորապես, որոշակի կարգավորումներ կան՝ որակի ապահովմանն ուղղված գործընթացներն առավել կանոնակարգված եւ ժամանակակից պահանջներին համապատասխան իրականացնելու տեսանկյունից: Կրթության՝ մինչեւ 2030 թվականի ռազմավարության գլխավոր ուղղություններից մեկը միջազգայնացումն է, եւ մենք կարեւորում ենք, որ ՄԿՈՒ հաստատություններն այդ գործընթացում ակտիվ ներգրավված լինեն: Այս համատեքստում նշեմ, որ վերջին տարիներին ՄԿՈՒ հաստատությունները հատկապես ակտիվ ներգրավված են էրազմուս+ ծրագրում, ինչը նաեւ եվրոպական մի շարք հաստատությունների հետ համագործակցության, փորձի փոխանակման եւ որակի բարելավմանն ուղղված կարեւոր գործընթաց է»,-* նշել է փոխնախարարը՝ ընդգծելով, որ այս բոլոր ուղղություններն իրար փոխլրացնելով՝ ապահովելու են ակնկալվող որակը:

Արաքսիա Սվաջյանը որակի գնահատման տեսանկյունից կարեւորել է նաեւ հավատարմագրման գործընթացը. 40-ից ավելի հաստատություններ արդեն հավատարմագրվել են, որոնցից 6-ը՝ ոչ պետական: *«Հավատարմագրման գործընթացը տալիս է ոչ միայն որակը հավաստող վերջնական փաստաթուղթ, այլ նաեւ հաստատությանը թույլ է տալիս ինքնավերլուծություն եւ արտաքին կարծիքի վերլուծություն անել: Մենք կարեւորում ենք միջազգային գործընկերների հետ համագործակցությունը, եւ վստահ եմ, որ Եվրոպական կրթական հիմնադրամի կողմից իրականացվող այս ծրագրի շրջանակում ունենալու ենք մեծ հաջողություն, որը մեզ համար նախանշային կարեւոր նշանակություն է ունենալու՝ հետագա գործընթացներն իրականացնելու տեսանկյունից»,-* ասել է փոխնախարարը:

Նա նշել է, որ Կրթության ռազմավարության 3 հիմնական ուղղություններն են կրթության բովանդակության բարելավումը, դասավանդողների մասնագիտական կարողությունների զարգացումը, կրթական միջավայրի ապահովումը: *«Բնականաբար, այս երեք բաղադրիչները սերտորեն կապակցված են, եւ դրանց առկայությունն է ապահովելու կրթության որակ: Շատ կարեւոր են նաեւ աշխատաշուկայի կարիքներին համապատասխան մասնագիտությունների ցանկի հստակեցումն ու այդ ցանկով շրջանավարտների թողարկումը: Մենք այս տարի վերանայում ենք ՄԿՈՒ հաստատությունների բոլոր մասնագիտությունները, որի շրջանակում դուրս ենք բերել այն մասնագիտությունները, որոնց կարիքն այս պահին մեր տնտեսությունում չկա, ինչպես նաեւ այն նոր մասնագիտությունները, որոնց կարիքը գործատուներն ունեն, բայց ֆորմալ կրթական համակարգում դեռեւս այդպիսի մասնագետներ պատրաստելու ծրագրեր չունենք: Ցանկը դեռեւս վերջնական տեսքի բերված չէ. այն կհրապարակվի, երբ ամբողջացվի»,-* նշել է փոխնախարարը:

Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի տնօրեն Ռուբեն Թոփչյանը նշել է, որ ՀՀ կրթության՝ մինչեւ 2030 թվականի զարգացման պետական ծրագրում նախանշված է շրջանավարտների մասնագիտական զբաղվածության մակարդակը հասցնել 90%-ի: *«Ներկայում կրթության որակը ոչ միայն ուսանողների եւ ծնողների, այլ նաեւ գործատուների ուշադրության կենտրոնում է: Այսօր աշխարհը շեշտադրում է ձեւավորող գնահատումը. այն ենթադրում է, որ ուսանողները պետք է պրակտիկ աշխատանք կատարեն ուսման ընթացքում եւ ստանան հետադարձ կապ՝ բարելավելու իրենց կարողությունները, որպեսզի ավարտելիս ունենան գործատուի պահանջներին համապատասխան կարողություններ»,-* ասել է նա՝ ընդգծելով, որ այդ նպատակով ՈԱԱԿ-ը հրավիրել է փորձագետների 12 երկրից, որոնք ՀՀ միջին մասնագիտական կրթական համակարգի գործընկերային գնահատում կիրականացնեն, կուսումնասիրեն ձեւավորող գնահատման փորձը եւ խորհրդատվություն կմատուցեն՝ ինչպես բարելավել այն: *«Միջազգային փորձագետների կողմից խորհրդատվություն ստանալուց հետո ՈԱԱԿ-ը եւ ողջ ՄԿՈՒ համակարգը ձեռնամուխ կլինեն դրանց իրագործմանը եւ առկա ձեռքբերումների բարելավմանը: Հույս ունեմ, որ մինչեւ 2030-ը կմոտենանք սահմանված նշաձողին: Գործատուներն այս առումով բավական մեծ անելիք ունեն. նրանք պետք է իրենց աշխատողներին ուղղորդեն դասախոսների հետ համատեղ լրացնելու առկա բացը՝ գիտելիքը կարողության վերածելու, որպեսզի ուսանողը դեռեւս սովորելու ընթացքում արդեն կարողանա աշխատանքն անել այնպես, ինչպես ակնկալում է գործատուն սկզբնական փուլում»,-* նշել է Ռուբեն Թոփչյանը:

Եվրոպական կրթական հիմնադրամի ֆորումի ղեկավար Մունիր Բաատիի խոսքով՝ կազմակերպության նպատակն է աջակցել ԵՄ գործընկեր պետություններին: *«7 տարի առաջ ՄԿՈՒ համակարգում որակի ապահովման հարթակ ստեղծեցինք, որին անդամակցում է 20 երկիր: Հայաստանում դիտարկելու եք ձեւավորող գնահատումը կրթական գործընթացում եւ դրա շուրջ խորհրդատվություն մատուցելու: Մեր փորձագետները որակի ապահովման մասնագետներ են իրենց երկրներում. լինելու են փորձագետներ Վրաստանից, Սերբիայից, Իսրայելից, Մարոկոյից եւ այլ երկրներից: Այցի ավարտին նրանք խորհրդատվություն կմատուցեն՝ մատնանշելով, թե ինչ մարտահրավերներ կան, եւ ինչպես է հնարավոր հաղթահարել դրանք: ՄԿՈՒ համակարգում շատ երկրներ նույնական խնդիրների են առնչվում, սակայն յուրաքանչյուրը յուրովի է լուծում դրանք: Մոտեցումները սովորաբար տարբեր են, բայց նաեւ կան նմանություններ: Եթե մենք դիտարկենք այն համակարգերը, որոնք լավ են աշխատում, կնշեմ դրանց հաջողությունը պայմանավորող 5 բաղադրիչ: Առաջինը՝ կառավարում, երկրորդը՝ աշխատաշուկայի մասին ուսումնասիրության, հետազոտության, տեղեկատվության արդյունավետ համակարգ, երրորդը՝ համակարգի ստանդարտների վերանայում, չորրորդը՝ դպրոցների ինքնավարություն, հինգերորդ բաղադրիչը՝ աշխատանքի վրա հիմնված կրթություն կամ դուալ կրթական համակարգ»,-* նշել է բանախոսը:

Հեղինե ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Խորհրդարան

Քննարկվել է *«Մասնագիտական կրթության եւ ուսուցման մասին»* օրենքի նախագիծը

Աժ գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության եւ սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի նիստում երկրորդ ընթերցմամբ քննարկվել է *«Մասնագիտական կրթության եւ ուսուցման մասին»* ՀՀ օրենքի նախագիծը:

Հարցը զեկուցել է ԿԳՄՍ նախարար **Ժաննա Անդրեասյանը:** Նրա խոսքով՝ առաջինից երկրորդ ընթերցման ընթացքում օրենսդրական փաթեթը մանրամասն քննարկվել է, կայացել են նաեւ հանրային լսումներ. *«Ներկայացված բոլոր առաջարկները պատշաճ քննարկվել են, եւ երկրորդ ընթերցման է ներկայացվել արդեն լրամշակված նախագիծը: Օրենսդրական փաթեթում իրականացվել են զգալի փոփոխություններ, մասնավորապես՝ խմբագրվել են օրենքում օգտագործվող առանձին հասկացություններ՝ հաշվի առնելով մասնագիտական հանրության եւ միջազգային փորձագետների առաջարկները: Արդյունքում՝ դրանց բովանդակությունն առավել համապատասխանեցվել է միջազգային փաստաթղթերի եւ մասնագիտական կրթության ոլորտի տերմինաբանությանը»:* Նախարարը ներկայացրել է այն հիմնական փոփոխությունները, որոնք իրականացվել են օրենսդրական փաթեթում, մասնավորապես՝ խմբագրվել են ինստիտուցիոնալ կամ ծրագրային հավատարմագրման հասկացությունները, որը նաեւ հնարավորություն կտա ամբողջությամբ հստակեցնել հավատարմագրման քաղաքականությունը՝ հաշվի առնելով, որ այն նաեւ պետք է համադրելի լինի բարձրագույն կրթության ոլորտում իրականացվող քաղաքականությանը: *«Կարեւոր խմբագրական եւ բովանդակային փոփոխություններ են կատարվել ու ֆինանսավորման ձեւերի տարատեսակ միջոցների փոխարեն կրթաթոշակի նոր սահմանում է տրվել, որով ուսանողական նպաստի, ինչպես նաեւ ուսման վարձի փոխհատուցման եւ զեղչի տրամաբանությունն ամբողջությամբ ներդրվել է կրթաթոշակի նոր խմբագրված մոդելում»,-* նշել է Ժաննա Անդրեասյանը՝ ընդգծելով, որ թիրախային աշխատանք է տարվել նաեւ ներառականության համատեքստում՝ մասնագիտական կրթության առանձնահատկությունները հաշվի առնելով, եւ այդ ձեւակերպումները նույնպես տեղ են գտել լրամշակված փաթեթում:

Ըստ նախարարի՝ որպես նախնական մասնագիտական կրթության որակավորման տարբերակ ներդրվել է *«կրտսեր մասնագետը»*՝ կարգավորելու առաջին մակարդակի առանձին մասնագիտությունների համար որակավորման անվանումների հարցը, որոնք իրենց բնույթով արհեստավոր չեն դիտվում (օրինակ՝ պարեկը, բուժակը եւ այլն): Հստակեցվել են մասնագիտական կրթության եւ ուսուցման բնագավառում պետական քաղաքականության սկզբունքները եւ անձի կրթության իրավունքի պետական երաշխիքները: Դրանք խմբավորվել են՝ ըստ առաջնահերթությունների, եւ ձեւակերպումների համար հիմք են ընդունվել *«ՀՀ կրթության՝ մինչեւ 2030 թվականի զարգացման պետական ծրագիրը»,* ինչպես նաեւ ՄԱԿ-ի Կայուն զարգացման 4-րդ եւ 8-րդ նպատակները եւ համապատասխան ձեւակերպումները: *«Այս առումով՝ ցանկանում եմ ընդգծել այնպիսի նպատակներ սահմանումը, ինչպիսիք են՝ վերացնել անհավասարությունները կրթության ոլորտում եւ ապահովել հավասար հասանելիություն մասնագիտական կրթության եւ ուսուցման բոլոր մակարդակներում, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար, նպաստել պատշաճ մասնագիտական կարողունակություններ ունեցող անձանց զբաղվածություն ունենալուն, արժանապատիվ աշխատանք գտնելուն եւ ձեռներեցությամբ զբաղվելուն: Ընդգծվել է այն հանգամանքը, որ ՄԿՈՒ-ն պետք է միտված լինի ոչ միայն անձի ներկայի, այլեւ ապագայի կարիքները սպասարկմանը»,-* շեշտել է նախարարը:

Նրա խոսքով՝ հստակեցվել են նաեւ մասնագիտական կրթական ծրագրերի մակարդակի ոլորտային որակավորումների շրջանակի բնութագրերը, ինչպես նաեւ դրանք փորձարկելու, գնահատելու եւ հաստատելու հետ կապված մեխանիզմները: Փորձարարական ծրագրերի համար սահմանվել են պարզեցված լիցենզավորում եւ շրջանավարտների դիպլոմավորման ճանաչում: ՄԿՈՒ կրթական ծրագրի լիցենզավորման համար նախատեսված պահանջներում կատարվել են որոշ փոփոխություններ, մասնավորապես՝ մասնավոր ոլորտի առաջարկով հիմնական աշխատանքային պայմանագրով աշխատող մանկավարժական աշխատողների ընդհանուր թիվը նվազեցվել է առնվազն 30%-ի (նախկին 50%-ի փոխարեն): *«Սա հնարավորություն կտա մասնավոր ոլորտից ավելի մեծ թվով աշխատակազմ ներգրավել դասավանդման գործընթացում, որը, հատկապես, գործնական հմտությունների համար էական ազդեցություն կարող է ունենալ»,-* փաստել է Ժաննա Անդրեասյանը:

Հստակեցվել են նաեւ աշխատանքի վրա հիմնված ուսուցման եւ հատկապես դուալ կրթության կարգավորումները: Հատկապես ուշադրություն է դարձվել առողջապահության, աշխատանքի անվտանգության հետ կապված դրույթներին, որոնք վերախմբագրվել են՝ հաշվի առնելով ոլորտում ՀՀ կոնվենցիոն պարտավորությունները, ինչպես նաեւ միջազգային լավագույն փորձը: *«Առանձնահատուկ ուշադրություն է դարձվել 16-18 տարեկան անձանց առողջության, անվտանգության համապատասխան պայմանների եւ անհատական պաշտպանության միջոցների սահմանմանը, որպեսզի աշխատանքի վրա հիմնված ուսուցման շրջանակում չունենանք վտանգման որեւէ ռիսկ: Օրենքի ընդունումից հետո մի շարք վտանգավոր համարվող մասնագիտությունների ցանկում կարվեն համապատասխան փոփոխություններ եւ կսահմանվեն մուտքային տարիքային համարժեք շեմեր»,-* ընդգծել է նախարարը:

Խմբագրվել են տնօրենի լիազորությունների, նշանակման, դադարեցման, հավաստագրի տրամադրման եւ կասեցման հիմքերը եւ ժամկետները, որի նպատակն է դրանք դարձնել առավել կանխարգելող եւ ամբողջական: *«Ցանկանում եմ ընդգծել կրթության ոլորտի ապաքաղաքականացման եւ ապակուսակցականացման հստակ վարվող քաղաքականության շրջանակում տնօրենի պաշտոնավարման ընթացքում քաղաքական զսպվածության պահանջը: Առանձին դրույթով ամրագրվել է, որ տնօրենն իր պաշտոնավարման ընթացքում պարտավոր է դրսեւորել քաղաքական զսպվածություն, իր պաշտոնեական դիրքը կամ աշխատանքային միջոցներն չօգտագործել կուսակցությունների կամ հասարակական, այդ թվում՝ կրոնական միավորումների շահերի համար կամ նրանց նկատմամբ վերաբերմունք քարոզելու կամ իր պաշտոնեական պարտականությունները կատարելիս այլ քաղաքական կամ կրոնական գործունեություն իրականացնելու համար: Այսպիսով՝ ամբողջացնում ենք այն երաշխիքները, որոնք պետք է օգնեն նաեւ համապատասխան հետեւանքներ սահմանելով՝ համակարգը զերծ պահել նմանատիպ վարքից»,-* իր խոսքն ամփոփել է Ժաննա Անդրեասյանը:

Պատասխանելով հանձնաժողովի անդամներին հարցերին՝ ԿԳՄՍ նախարար անդրադարձել է, մասնավորապես, դպրոցների ապաքաղաքականացման եւ քաղաքական զսպվածության հարցի կարգավորմանը: *«Առաջին ընթերցման ժամանակ արդեն իսկ ունեինք սահմանված հստակ պահանջ, որ տնօրենի պաշտոնի համար չի կարող դիմել մարդ, որը հանդիսանում է որեւէ քաղաքական կուսակցության ղեկավար մարմնի անդամ: Ընդ որում՝ կրթական տարբեր մակարդակների համար մեր կարգավորումները համադրելի են: Սակայն ակնհայտ է, որ այստեղ կարիք ունենք առաջին հերթին վարքային սահմանափակում սահմանելու, որը հնարավորություն չի տա տվյալ պաշտոնը զբաղեցնող անձին ունենալ վարքային այնպիսի դրսեւորում, որը կարող է մեկնաբանվել՝ որպես որեւէ կուսակցության կամ կրոնական միավորման օգտին քարոզչություն կամ դրա շահերից ելնելով՝ որոշակի աշխատանք: Նմանատիպ կարգավորումներ գործում են, օրինակ, դիվանագիտական ծառայողների համար: Այսինքն՝ այն ձեւակերպումները, որոնք առաջարկվում են, արդեն իսկ որոշ ոլորտների պարագայում գործում են, եւ մեզ համար կարեւոր է, որ կրթության ոլորտում այն ունենա նաեւ օրենսդրական ձեւակերպում եւ տա առանձին լծակներ՝ կոնկրետ ահազանգերի դեպքում քայլեր ձեռնարկելու համար»,-* ասել է Ժաննա Անդրեասյանը:

Աժ գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության եւ սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ **Սիսակ Գաբրիելյանը** շնորհակալություն է հայտնել ԿԳՄՍ նախարարությանը եւ GIZ-ի փորձագետներին՝ նախագծի շուրջ իրականացրած մեծածավալ աշխատանքների համար:

Աժ հանձնաժողովը դրական եզրակացություն է տվել *«Մասնագիտական կրթության եւ ուսուցման մասին»* ՀՀ օրենքի նախագծին:

Հեղինե ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Պարզաբանում

Բացակայությունների հիման վրա լրացուցիչ գրավոր աշխատանքների եւ քննությունների վերաբերյալ

ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը տեղեկացնում է, որ հանրակրթական ուսումնական հաստատություններում ուստարվա ամփոփման աշխատանքները պատշաճ կազմակերպելու համար դպրոցները պետք է առաջնորդվեն բացակայությունների հաշվառման եւ, ըստ անհրաժեշտության, լրացուցիչ գրավոր աշխատանքների եւ քննությունների իրականացման ներքոհիշյալ սկզբունքներով.

1. Այն դասարաններում, որտեղ հանրակրթության նոր չափորոշիչը դեռեւս ներդրված չէ, եւ 2024 թվականի մայիսի 20-ի դրությամբ սույն ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի ընթացքում սովորողն արդեն 60 ժամից ավելի բացակայություն ունի, ամփոփված տվյալների հիման վրա մանկավարժական խորհրդի նիստում հաստատվում է այդ սովորողի համար լրացուցիչ գրավոր աշխատանքների իրականացումը մայիսի 20-24-ն ընկած ժամանակահատվածում կազմակերպելու մասին որոշում:

2. Այն դասարաններում, որտեղ հանրակրթության նոր չափորոշիչը դեռեւս ներդրված չէ, եւ 2024 թվականի մայիսի 20-24-ն ընկած ժամանակահատվածում հաճախումների հիման վրա է որոշվելու սովորողի 60 ժամից ավելի բացակայության փաստը, այսինքն՝ սովորողը 60 ժամից ավելի բացակայություն ունենալու ռիսկի տակ է գտնվում, ապա անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել՝ ուսումնական պարապմունքներին սովորողի ներկայությունն ապահովելու համար: Անհնարինության դեպքում՝ 2024 թվականի մայիսի 24-ի դրությամբ սույն ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի ընթացքում 60 ժամից ավելի բացակայություն ունենալու պարագայում ամփոփված տվյալների հիման վրա մանկավարժական խորհրդի (ըստ անհրաժեշտության՝ արտահերթ) նիստում հաստատվում է այդ սովորողի համար լրացուցիչ գրավոր աշխատանքների իրականացումը մայիսի 27-30-ն ընկած ժամանակահատվածում կազմակերպելու մասին որոշում:

3. Այն դասարաններում, որտեղ հանրակրթության նոր չափորոշիչը ներդրվել է, եւ 2024 թվականի մայիսի 20-24-ն ընկած ժամանակահատվածում հաճախումների հիման վրա է որոշվելու սովորողի 200 ժամից ավելի բացակայության փաստը, այսինքն՝ սովորողը 200 ժամից ավելի բացակայություն ունենալու ռիսկի տակ է գտնվում, անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել՝ ուսումնական պարապմունքներին սովորողի ներկայությունն ապահովելու համար: Անհնարինության դեպքում՝ 2024 թվականի մայիսի 24-ի դրությամբ ամփոփված տվյալների հիման վրա՝ մանկավարժական խորհրդի (ըստ անհրաժեշտության՝ արտահերթ) նիստում հաստատվում է սույն ուսումնական տարվա ընթացքում 200 ժամից ավելի բացակայություն ունեցող սովորողի համար լրացուցիչ քննությունները մայիսի 27-30-ն ընկած ժամանակահատվածում կազմակերպելու մասին որոշում:

Հիշեցնենք, որ ըստ հանրակրթության նոր չափորոշչի (2-րդ, 5-րդ եւ 7-րդ դասարաններ, ինչպես նաեւ Տավուշի մարզի դպրոցների բոլոր դասարաններ), գործում է ոչ թե յուրաքանչյուր կիսամյակում 60-ից ավելի, այլ ողջ տարվա ընթացքում 200 ժամից ավելի բացակայության սկզբունքը:

Կառավարության նիստում

Առաջարկվում են փոփոխություններ՝ *«Մշակութային օրենսդրության հիմունքների մասին»* օրենքում

Գործադիրը հավանության է արժանացրել *«Մշակութային օրենսդրության հիմունքների մասին»* ՀՀ *օրենքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին»* օրենքի նախագծի վերաբերյալ Կառավարության օրենսդրական նախաձեռնությունը: Այն սահմանված կարգով կներկայացվի Ազգային ժողով:

Որպես ոլորտը կանոնակարգող մեկ միասնական իրավական փաստաթուղթ՝ նշյալ օրենքն ընդունվել է 2002 թվականին: Օրենքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը բխում է ՀՀ մշակույթի պահպանության եւ զարգացման՝ 2023-2027 թթ. ռազմավարությունից եւ պայմանավորված է օրենսդրական դաշտի նույնականացման անհրաժեշտությամբ, որը կնպաստի պետության կողմից իրականացվող մշակութային քաղաքականության արդյունավետության բարձրացմանը եւ ոլորտի առավել արդյունավետ կառավարմանը: Այն համահունչ է նաեւ ՀՀ Կառավարության՝ 2021-2026 թթ. գործունեության միջոցառումների ծրագրին:

Առաջարկվող լրացումներն ու փոփոխությունները պայմանավորված են նաեւ ՀՀ-ում գործող պետական մշակութային կազմակերպությունների կառավարման մոդելների կատարելագործման եւ ֆինանսավորման նոր մոդելների ներդրման, ստեղծարար ոլորտի զարգացման, ինքնազբաղ արվեստագետների գործունեության համար բարենպաստ միջավայրի ձեւավորման անհրաժեշտությամբ:

Օրենքում կատարված փոփոխությունները վերաբերում են Մշակույթի զարգացման հիմնադրամի գործունեությանն ու գործառույթներին, *«ինքնազբաղ արվեստագետ»* եւ *«մշակութային գործունեությամբ զբաղվող անձ»* եզրույթների հստակեցմանը, մշակութային կազմակերպություններին *«պետական»* կարգավիճակ շնորհելու գործընթացի արժեւորմանը, պետության կողմից ստեղծարար ոլորտի խթանման եւ զարգացման համատեքստում մշակույթի ոլորտում անվանական թոշակների սահմանմանը:

Առանցքային է օրենքում *«ինքնազբաղ/անկախ ստեղծագործողների»* եզրույթի սահմանումը, այն է՝ որեւէ ստեղծագործական աշխատողների միության չանդամակցող եւ քաղաքացիաիրավական պայմանագրով ծառայություններ մատուցող կամ աշխատանքներ կատարող, ինչպես նաեւ անհատ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անձ, որը գրանցված է հարկային դաշտում եւ ինքնուրույն իրացնում է իր ստեղծած արտադրանքը:

Օրենքով սահմանվել է նաեւ *«մշակութային գործունեությամբ զբաղվող անձ»* հասկացությունը, այն է՝ որեւէ մշակույթի ոլորտում գործունեություն իրականացնող կամ մշակութային ոչ առեւտրային կազմակերպության հաստիքացուցակում ներառված եւ ստեղծագործական գործունեությամբ ֆիզիկական անձ: Տվյալ կազմակերպությունների ոչ ստեղծագործական անձնակազմը՝ տնօրեններ, տեխնիկական սպասարկողներ, հսկիչներ, հաշվապահներ, ադմինիստրատորներ, չեն հանդիսանում մշակութային գործունեությամբ զբաղվող անձինք:

Վերոնշյալ լրացումները միտված են խթանելու ինքնազբաղ/անկախ ստեղծագործողների գործունեությունը, որն իրականացվում է ԿԳՄՍՆ կողմից հայտարարվող դրամաշնորհային ծրագրերի, նախարարության ենթակայությամբ գործող ՊՈԱԿ-ների կողմից կազմակերպվող միջոցառումներում վերոնշյալ ստեղծագործողներին ընդգրկելու, ինչպես նաեւ ինքնազբաղ արվեստագետների համար բարենպաստ միջավայրի եւ հավասար մրցակցային դաշտի ձեւավորման միջոցով:

Պետական ոչ առեւտրային կազմակերպությունների ֆինանսավորման նոր մոդելի ներդրման հրամայականով պայմանավորված՝ օրենքում կատարվել է համապատասխան լրացում: Ամրագրվել է, որ նորաստեղծ Մշակույթի զարգացման հիմնադրամը կոչված է ներդնելու թանգարանների արդյունավետ կառավարման, թատերահամերգային կազմակերպությունների առաջխաղացման մեխանիզմներ, ինչպես նաեւ իրականացնելու լրացուցիչ ֆինանսական միջոցների ներգրավման, զարգացման հեռանկարային ծրագրերի ներկայացման եւ ՀՀ-ում ու միջազգային հարթակներում հայ մշակույթի հանրահռչակմանն ուղղված գործառույթներ:

Մեկ այլ լրացմամբ՝ ամրագրվել են ՀՀ կառավարության լիազորությունները ՊՈԱԿ հանդիսացող մշակութային հաստատությունների պետական բյուջեով նախատեսված ծրագրերի ֆինանսավորման, մշակութային կազմակերպությունների աշխատակիցների վերապատրաստման, ստեղծագործական կազմի ատեստավորման եւ ելույթավճարների տրամադրման, ինչպես նաեւ սակագնային ընդհանուր քաղաքականության սկզբունքների վերաբերյալ ուղենիշային կարգերի հաստատման, մշակույթի ոլորտի միջազգային հեղինակավոր փառատոների եւ մրցանակաբաշխությունների մասնակցած եւ մրցանակի արժանացած մշակույթի գործիչներին անվանական թոշակ տրամադրելու վճարման կարգը եւ չափերը հաստատելու սկզբունքները:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2024 թվականի փետրվարի 28-ին ընդունվել է *«Հայաստանի Հանրապետության պետական պարգեւների եւ պատվավոր կոչումների մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին»* օրենքը, որով չեղարկվել են ՀՀ պատվավոր կոչումները, ուժը կորցրած է ճանաչվել օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետը:

Միեւնույն ժամանակ, *«պետություն»*, *«պետական»* եւ *«պետականություն»* բառերի առավել արժեւորման նպատակով անհրաժեշտություն է առաջացել կանոնակարգել *«պետական»* բառի օգտագործումը: Սա առաջին հերթին պայմանավորված է այն հանգամանքով, որ «պետական» անվանումը կրող կազմակերպությունները ներկայում ունեն ե՛ւ համապետական, ե՛ւ մարզային, ե՛ւ համայնքային նշանակություն, մինչդեռ *«պետական»* անվանումը պետք է շնորհվի համապետական նշանակության կազմակերպություններին: Հետեւաբար, պետք է կիրառվի տարբերակված մոտեցում: Ներկայում համապետական նշանակության կազմակերպությունների տարբերակումն իրականացվում է *«ազգային»* բառի օգտագործմամբ: Առաջարկվում է *«պետական»* անվանումը շնորհել միայն այն կազմակերպություններին, որոնք ունենք համապետական նշանակություն, *«մարզային»* անվանումը՝ մարզային նշանակություն եւ գործառույթներ իրականացնող կազմակերպություններին եւ *«համայնքային»* անվանումը՝ համայնքային գործունեություն ծավալող եւ նշանակություն ունեցող կազմակերպություններին:

ԿԳՄՍ նախարարի հրամանով արդեն իսկ հաստատվել է նախարարության ենթակայությամբ գործող թատերահամերգային ՊՈԱԿ-ների ստեղծագործական անձնակազմի մասնագիտական որակավորման քննությունների անցկացման օրինակելի կանոնակարգը, որի համատեքստում օրենքում կատարվել է լրացում: Դրա համաձայն՝ մշակութային ոչ առեւտրային կազմակերպությունների կողմից տրամադրվող ծառայությունների սակագների հաստատումը եւ աշխատակիցների պարբերական ատեստավորման գործընթացի իրականացումը վերապահվել են նշյալ կազմակերպություններին:

Օրենքի անցումային դրույթներով սահմանվել է, որ ուժի մեջ մտնելուց 9 ամիս հետո պետք է ընդունվեն օրենքից բխող նորմատիվ իրավական ակտեր ու կանոնակարգեր, այդ թվում՝ Մշակույթի զարգացման հիմնադրամի կանոնադրությունը, սահմանվեն ՊՈԱԿ հանդիսացող մշակութային հաստատությունների պետական բյուջեով նախատեսված ծրագրերի ֆինանսավորման սկզբունքները, մշակութային հաստատությունների պետական բյուջեով նախատեսված ծրագրերի եւ միջոցառումների ֆինանսավորման, աշխատակիցների վերապատրաստման, ստեղծագործական կազմի ատեստավորման եւ ելույթավճարների տրամադրման սկզբունքների ձեւավորման կարգերը, հաստատությունների սակագնային ընդհանուր քաղաքականությունը: Անցումային դրույթներով նաեւ սահմանվել է, որ մշակութային հաստատությունների անվանումների համապատասխանեցումները կավարտվեն 2025 թ. դեկտեմբերի 25-ին:

Հեղինե ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Կստեղծվի սպորտի կառավարման կենտրոն

սկիզբը՝ էջ 1

Կառավարության մեկ այլ որոշմամբ՝ Մանանդյան 41 հասցեում տեղակայված նախկին *«Միկա»* մարզահամալիրը (2,89 հա հողամաս - 3658,9 քմ պետական գրանցում ստացած եւ 5421,5 քմ ինքնակամ շինություններ՝ մարզադաշտ եւ կից սպորտային համալիր 2 մարզադահլիճներով, վարչական մաս), ինչպես նաեւ ՀՀ Արմավիրի մարզի Ջրառատ գյուղում կառուցված Սիմոն Մարտիրոսյանի անվան մարզակառույցը եւ 0.12 հեկտար մակերեսով հողամասը ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեից կփոխանցվի ՀՀ ԿԳՄՍ նախարարությանն ու անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով կտրամադրվի նորաստեղծ Սպորտի կառավարման կենտրոնին:

Ժաննա Անդրեասյանը նշել է՝ կենտրոնի ստեղծմամբ հնարավոր կլինի կազմակերպել եւ օգտագործել գոյություն ունեցող մարզադաշտը կից սպորտային համալիրով, անցկացնել սպորտային միջոցառումներ ու հավաքներ, իրականացնել մարզման չափորոշիչներին համապատասխան ուսումնամարզական ծրագրեր, որը հնարավորություն կտա նաեւ պահպանել գույքը, ձեռք բերել նորը եւ ներդրումներ կատարել:

Սպորտի կառավարման կենտրոնին կհանձնվեն յուրաքանչյուր մարզում նախատեսված արագ հավաքվող թեթեւ մետաղական կոնստրուկցիաներով մարզադահլիճները, ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի ոլորտների 2023-2030 թվականների ռազմավարության նախագծով յուրաքանչյուր մարզում նախատեսված մարզահամալիրները, Լոռու մարզի Շամուտ գյուղում կառուցվելիք ըմբշամարտի մարզաբազան, ինչպես նաեւ նախկին *«Միկա»* մարզահամալիրը, Արմավիրի մարզի Ջրառատ համայնքում կառուցված Սիմոն Մարտիրոսյանի անվան ծանրամարտի մարզադպրոցը եւ կառուցվելիք այլ մարզական օբյեկտներ: Ընկերության կազմում կընդգրկվեն նաեւ կառուցվող եւ կառուցվելիք այլ մարզահամալիրներ:

Կստեղծվի կառավարման 5-հոգանոց խորհուրդ, որի կազմում կընդգրկվեն ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարը, սպորտի ոլորտը համակարգող նախարարի տեղակալը, մեկական ներկայացուցիչ Ֆինանսների, Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարություններից եւ մարզաշխարհից: Խորհուրդը կընտրի նորաստեղծ կենտրոնի գործադիր մարմնի ղեկավարին:

Վարչապետ **Նիկոլ Փաշինյանը** կարեւորել է կենտրոնի արդյունավետ աշխատանքի ապահովումն ու անդրադարձել նաեւ պետություն-մասնավոր հատված գործընկերությանը:

Ժաննա Անդրեասյանը նշել է՝ սպորտի ռազմավարությամբ ամրագրված է մասնավոր հատվածի հետ համագործակցության նոր ձեւաչափի ներդրումը, այդ թվում՝ կառավարման ոլորտում:

«Այս ուղղությամբ զուգահեռաբար աշխատում ենք: Մասնավոր ոլորտի կողմից արդեն իսկ բավական մեծ հետաքրքրություն կա, մասնավորապես՝ մարզերում տիպային մարզահամալիրների կառուցման ուղղությամբ: Մասնավոր ոլորտի մասնագիտացված ընկերությունները, որոնք արդեն իսկ կառուցել եւ շահագործման են հանձնել տարբեր մարզահամալիրներ, պատրաստակամ են նաեւ համաֆինանսավորման եղանակով մասնակցել բուն կառուցմանը, եւ հետո ամբողջությամբ ներգրավվել կառավարման գործընթացում»,- նշել է ԿԳՄՍ նախարարը՝ հավելելով, որ ընտրվել է փակ բաժնետիրական ընկերության ձեւաչափը՝ ճկունության եւ մասնավոր ոլորտի հետ համատեղ ծրագրերի եւ կառավարման առումով:

Սպորտի կառավարման կենտրոնի խորհուրդը կամրագրի սպորտային ենթակառուցվածքների օգտագործման կանոնակարգը, համաձայն որի՝ առաջնահերթություն կտրվի ենթակառուցվածքների օգտագործմանը մարզական միջոցառումների անցկացման համար՝ շեշտը դնելով պետության կողմից կամ պետության ֆինանսավորմամբ կազմակերպվող միջոցառումների վրա:

Ճանաչի՛ր, որ սիրես

Արագածոտնի մարզի նշանավոր վանքերն ու եկեղեցիները

սկիզբը՝ նախորդ համարում

Կարբիի Սուրբ Աստվածածին եկեղեցի

Մարզկենտրոն Աշտարակից մոտ 2 կմ հեռավորությամբ գտնվում է Կարբի գյուղը, որը հարուստ է քրիստոնեական սրբավայրերով: Կարբիի Սուրբ Աստվածածին եկեղեցին գյուղի ամենանշանավոր եկեղեցին է՝ կանգուն Կարբի գյուղի կենտրոնական մասում: Կառուցվել է 1691–1693 թթ. կարբեցի մեծահարուստ վաճառական Այվազի կողմից: Սուրբ Աստվածածին եկեղեցին արտաքինից ուղղանկյուն հատակագծով եռանավ բազիլիկ է՝ երկթեք տանիքով, ներսից՝ չորս կենտրոնական մույթերով, որոնց վրա հենվում են թաղակիր կամարները: Եկեղեցու արեւելյան մասում կանգուն է զանգակատունը՝ կառուցված XIII դարում:

Կարբին, բացի Սուրբ Աստվածածին եկեղեցուց, ունեցել է նաեւ այլ եկեղեցիներ՝ Սուրբ Կիրակի կամ Սուրբ Գեւորգ (XI–XIII դդ.), Ծիրանավոր, Թուխ Մանուկ, մենաստան-կուսանոց: Մեզ են հասել Կարբիում գրված հայերեն մի քանի ձեռագրեր, որոնցից մեկը XIII դարում է ստեղծվել: Գյուղում եւ շրջակայքում են գտնվում *«Զարգարենց ժամ»* մատուռը, բերդատեղի, քարայրեր:

Կոշի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի

Արագածոտնի մարզի Կոշ գյուղը գտնվում է Աշտարակ քաղաքից մոտ 18 կմ արեւմուտք՝ Երեւան–Գյումրի ավտոխճուղու աջ կողմում:

Կոշը պատմական հուշարձաններով հարուստ, հնավանդ պատմությամբ վկայված հայտնի բնակավայր է: Հնում կոչվում էր Կուաշ:

Կոշ գյուղում են գտնվում միանավ, թաղածածկ Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին (XIII դ.) եւ Սուրբ Գեւորգ եկեղեցին (XIX դ.), որոնցից միայն կիսապատերն են պահպանվել:

Գյուղի հարավային սահմանին՝ խճուղու աջ եզրին, կանգնած է գեղաքանդակ, հոյաշեն խաչքար-հուշարձան:

Կոշի Սուրբ Ստեփանոս Նախավկա եկեղեցի

Սուրբ Ստեփանոս Նախավկա եկեղեցին (VII դ.), կառուցված դեղնակարմրավուն եւ դարչնագույն սրբատաշ տուֆից, գտնվում է Կոշ գյուղի հյուսիս-արեւելյան ծորալանջին: Այն փոքրածավալ է, *«խաչաձեւ գմբեթավոր»* տիպին բնորոշ հորինված ունի՝ արեւելքից՝ կիսաշրջան, մյուս երեք կողմերից՝ ուղղանկյուն թեւերով:

Եկեղեցու շրջակայքում է գտնվում հին ավանը՝ ջրավազանով, մատուռներով եւ պաշտամունքային կառույցներով: Եկեղեցուց արեւելք պահպանվել են X դարում կառուցված մատուռի հիմնապատերը, դեպի արեւմուտք՝ XIII դարի խաչքարերով հարուստ գերեզմանոցը:

* * *

Ըստ ավանդության՝ համաշխարհային ջրհեղեղից հետո, երբ Նոյն ու իր ընտանիքն իջնում են Արարատի գագաթից, այստեղ բնակություն է հաստատել աստվածաշնչյան Քամի որդի Քուշը, որի անվան աղավաղումից առաջացել է Կուաշ, Կվաշ, Կոշ անվանումը:

Փարպիի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի

Աշտարակ քաղաքից մոտ 5 կմ հյուսիս-արեւմուտք գտնվող եւ պատմիչ Ղազար Փարպեցու հայրենի Փարպի գյուղը հարուստ է պատմական եւ մշակութային շատ արժեքավոր հուշարձաններով, հնագույն զարմանահրաշ կոթողներով:

Գյուղի հին գերեզմանոցում կանգուն է Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին (XIII դ.), որը թաղածածկ դահլիճ է, հատակագծում՝ ուղղանկյուն խորանով: Եկեղեցին գտնվում է գյուղի հարավ–արեւմտյան կողմում՝ Շաղվերդ գետի ձախ ափին: Եկեղեցին նմանվում է երկարավուն սրահի՝ ուղղանկյուն հատակագծով:

Սուրբ Գրիգոր եկեղեցին վերակառուցվել է XIX դարավերջին եւ մուտքի առջեւ ավելացվել է գավթանման կցակառույց:

շարունակությունը՝ էջ 7

Արագածոտնի մարզի նշանավոր վանքերն ու եկեղեցիները

սկիզբը՝ էջ 6

Փարպիի Սրբոց Թարգմանչաց եկեղեցի

Սրբոց Թարգմանչաց քառախորան գմբեթավոր եկեղեցին գտնվում է Փարպի գյուղի արեւելյան կողմում՝ բլրի վրա:

Այն կառուցվել է 7-րդ դարում, դարչնագույն սրբատաշ տուֆից: Պահպանված են հայկական ճարտարապետության հիմնական սկզբունքները, կառույցը ներդաշնակ է միջավայրին:

Փարպիի Սուրբ Ծիրանավոր եկեղեցի

Սուրբ Ծիրանավոր եկեղեցին գտնվում է Փարպի գյուղի արեւելյան կողմում: Այն կառուցվել է վաղ միջնադարում, թաղածածկ բազիլիկ է, սալածածկ հատակով եւ համարվում է V դարի կառույց:

Ագարակի Սուրբ Աստվածածին եկեղեցի

Ագարակ գյուղը գտնվում է Աշտարակ քաղաքից մոտ 6 կմ արեւմուտք՝ Երեւան–Գյումրի ավտոխճուղու վրա: Գյուղի Սուրբ Աստվածածին եկեղեցին (VII դ.) ավերակ է: Շրջակայքում կան տարբեր ժամանակների ավերակներ: Եկեղեցին վատ է պահպանվել եւ մեզ է հասել ավերված վիճակում:

Ագարակի Սուրբ Ստեփանոս Նախավկա եկեղեցի

Բավականին լավ պահպանված այս կառույցը, եթե նկատի չառնենք խաչաթեւերի թափված տանիքները, մեզ է հասել՝ առանց որեւէ էական վերանորոգման: Հետագա վերանորոգման արդյունք է միայն գմբեթի քարե սալերով ծածկը: Հուշարձանը կառուցված է սրբատաշ տուֆից: Ագարակի եկեղեցու կառուցման մոտավոր ժամանակը համարվում են 632–698 թթ. միջեւ ընկած տարիները:

Քասաղի Սուրբ Խաչ եկեղեցի

Վաղքրիստոնեական հայկական ճարտարապետության այս նշանավոր հուշարձանը գտնվում է Ապարան քաղաքի (Երեւան քաղաքից հեռավորությունը մոտ 42 կիլոմետր է, իսկ մարզկենտրոն Աշտարակից մոտ 32 կիլոմետր դեպի հյուսիս) կենտրոնում: Ենթադրվում է, որ IV–V դդ. եղել է Արշակունիների ապարանքի արքունի աղոթատեղին: Համալիրի մեջ մտել են գլխավոր եւ հնագույն Սուրբ Խաչ եկեղեցին, հետագայում կառուցված սյունասրահը եւ միանավ բազիլիկ եկեղեցին:

Սուրբ Խաչ եկեղեցին եռանավ բազիլիկ է՝ ուղղանկյուն հատակագծով, որի աղոթասրահը երկու պայտաձեւ կամարաշարերի միջոցով բաժանվել է ընդհանուր երկլանջ տանիքի տակ առնված կենտրոնական՝ մեծ եւ երկու կողային փոքր նավերի: Արեւելյան խորանը ներսից պայտաձեւ է, դրսից՝ հնգանիստ: Ունի երեք մուտք՝ երկուսը՝ հարավային եւ մեկը՝ արեւմտյան կողմերից: Քասաղի բազիլիկ եկեղեցու քանդակազարդ խոյակներից մեկն այժմ գտնվում է Հայաստանի պատմության պետական թանգարանում:

1980–1990 թթ. համալիրի Սուրբ Խաչ եկեղեցին՝ կից ավանդատնով, ամբողջովին նորոգվել է եւ 1996 թվականից դարձել գործող եկեղեցի:

Եղիպատրուշի Կաթողիկե (Սուրբ Աստվածածին) եկեղեցի

Եղիպատրուշ գյուղը գտնվում է Ապարան քաղաքից մոտ 10–12 կմ հարավ-արեւելք, մարզկենտրոնից՝ 27 կմ հեռավորության վրա:

Հազարամյակների պատմություն ունի գյուղը: XIII դ. սկզբներին այստեղ շինարարական գործունեություն են ծավալել տարածաշրջանի նոր տերերը՝ Վաչուտյանները:

շարունակությունը՝ էջ 8

Արագածոտնի մարզի նշանավոր վանքերն ու եկեղեցիները

սկիզբը՝ էջ 7

Քուրդ Ա. Վաչուտյանը եւ իր կին Խորիշահ իշխանուհին կառուցել են ժամանակաշրջանի լավագույն կենտրոնագմբեթ կաթողիկե եկեղեցին եւ գավիթը: Եկեղեցին մեր օրերն էր հասել կիսավեր վիճակում: 1980-1988 թթ. ամբողջովին վերականգնվեց Կաթողիկե եկեղեցու փլված գմբեթը եւ ամրացվեցին գավթի պատերը:

Սուրբ Պողոս-Պետրոս եկեղեցի

Արագածոտնի մարզի Զրամբար (Զովունի) գյուղը գտնվում է Երեւանից մոտ 40 կմ, իսկ մարզկենտրոն Աշտարակ քաղաքից մոտ 25 կմ հեռավորությամբ: Գյուղի մոտ (5 կմ հեռավորությամբ)՝ Ապարանի ջրամբարի ձախ ափին է գտնվում Սուրբ Պողոս–Պետրոս եկեղեցին: Այն ուղղանկյուն դահլիճ է, որի երկայնական պատերին կից որմնամույթերը կրել են գմբեթը: Հուշարձանը հայկական ճարտարապետության *«գմբեթավոր դահլիճ (սրահ)»* տիպի առաջին օրինակներից է եւ ստացվել է հնագույն բազիլիկ եկեղեցու վերակառուցումից: Համարվում է, որ Սուրբ Պողոս-Պետրոս եկեղեցին նախապես եղել է հեթանոսական մեհյան, իսկ III դարի վերջին կամ IV դարի սկզբներին սրբագործվել է ու վերածվել քրիստոնեական պաշտամունքի աղոթասրահի, եւ միայն դրանից հետո, V դարի վերջին կամ VI դարի սկզբին վերածվել է գմբեթավոր սրահի:

Թուխ Մանուկ եկեղեցի

Թուխ Մանուկ եկեղեցին նույնպես գտնվում է Զրամբար (Զովունի) գյուղում: Այն միանավ, պայտաձեւ խորանով եկեղեցի է (IV–V դդ.): Թուխ Մանուկ եկեղեցին կառուցված է տեղական տուֆի բավական խոշոր սրբատաշ քարերից: Ունի երկու դուռ՝ հյուսիսային եւ հարավային կողմերում:

Սուրբ Վարդան եկեղեցի

Զրամբար (Զովունի) գյուղի Սուրբ Վարդան եկեղեցին միանավ, պայտաձեւ աբսիդով կառույց է, որի հարավային պատին կից պահպանվել է կրկնահարկ դամբարանը: Դամբարանի առաջին հարկը, որ փորված է եղել գետնի մեջ, լավ է պահպանված: Այն երեսպատված է տեղական անմշակ գետաքարով եւ ունի 2,8 մ խորություն: Դամբարան կարելի է իջնել աստիճաններով. եկեղեցու եւ դամբարանի մուտքերը գտնվում են միեւնույն հրապարակի վրա: Սուրբ Վարդան եկեղեցին հորինվածքով առնչվում է Էջմիածնի Սուրբ Հռիփսիմեի տաճարի այժմյան կառույցի տակ պահպանված դամբարանին եւ, ամենայն հավանականությամբ, V դ. կեսերի գործ է:

Ապարանի ջրամբարի (կառուցվել է 1962–1967 թթ.) կառուցմամբ պայմանավորված՝ որոշում ընդունվեց, որ ջրի տակ մնացող Զովունի գյուղի տարածքից անհրաժեշտ է տեղափոխել հայկական արվեստի պատմության համար խիստ կարեւոր երեք հուշարձան: Հուշարձաններից երկուսը՝ Թուխ Մանուկը եւ Սուրբ Վարդանը, մանրամասն չափագրումից եւ քարերի համարակալումից հետո քանդվեցին, տեղափոխվեցին եւ կրկին վերաշարվեցին գյուղի արեւելյան՝ Խաչեր կոչվող բարձունքում: Այդ երկու եկեղեցիները հայ իրականության մեջ առաջին ճարտարապետական շինություններն էին, որ մարդու ձեռքով *«փոխեցին»* իրենց դարավոր տեղը: Սուրբ Պողոս-Պետրոս բազիլիկ եկեղեցին ուսումնասիրությունից հետո մնաց տեղում:

* * *

Ավանդաբար, պատմում են, որ մատուռ-ուխտատեղին կառուցվել է Վարդան Մամիկոնյանի հիշատակին, եւ այստեղ ամփոփել են Վարդան Մամիկոնյանի մարմնի նշխարներ: Եկեղեցուն կից կառուցված դամբարանում ամփոփվել է Նիգ-Ապարանի տեր եւ Սուրբ Վարդանի ուխտակից նախարար Տաճատ Գնթունին, ով նույնպես նահատակվել է Ավարայրի դաշտում:

Մաստարայի Սուրբ Հովհաննես եկեղեցի



Մաստարա գյուղը գտնվում է Աշտարակ քաղաքից մոտ 60 կմ հեռավորությամբ: Գյուղի կենտրոնում գտնվում է Սուրբ Հովհաննես եկեղեցին, որը վաղ միջնադարյան Հայաստանի ինքնատիպ եկեղեցական կառույցներից է: Այն քառախորան է, ունի գմբեթավոր քառակուսի հորինվածք: Հարավային եւ արեւմտյան ճակատներին պահպանված արձանագրությունները վկայում են, որ այն կառուցել է Գրիգորիս վանականը (VII դ.): Սակայն տեսակետ կա, որ եկեղեցին կառուցվել է V դ., իսկ VII դ. վերակառուցվել է: Ավելի ուշ եկեղեցին ամրացվել է բարձր շրջապարսպով եւ բերդի վերածվել:

Եկեղեցու յուրօրինակությունը հիմք է դարձել, որ հայկական ճարտարապետության պատմության մասնագետները հետագայում կառուցված նույն հորինվածքային լուծումներն ունեցող եկեղեցիները կոչեն *«մաստարայատիպ»:*

* * *

Հնավանդ ավանդությամբ՝ Գրիգոր Լուսավորիչը Կեսարիայից իր հետ բերել էր Սուրբ Հովհաննես Մկրտչի մասունքները եւ մի մասունք ամփոփել է այստեղ, վրան կառուցել եկեղեցի ու գյուղին տվել Մաստարա անունը, որը նշանակում է *«մասը տարա»:*

(շարունակելի)

Արման ՄԱԼՈՅԱՆ,
պատմական գիտությունների թեկնածու

Հետաքրքրաշարժ ֆիզիկա

Ձգողություն, մատերիա, շարժում

Այսպիսի աշխատանք գրելու գաղափարը ձեւավորվել է տարիների ընթացքում, զանգվածների միջեւ հարյուրամյակների առեղծվածային ձգողության երեւույթը որեւէ կերպ բացատրելու, այս թեմայում ավելի որոշակիություն ստեղծելու նպատակով: Այն բացահայտվել եւ սահմանվել է Նյուտոնի կողմից եւ մինչեւ հիմա լրիվ պարզաբանված չէ: Իրականում, գոյություն ունի՞, ի՞նչ է դա, ո՞րն է նրա դերը բնության մեջ ընթացող այլ երեւույթներում: Այս հարցերին պատասխաններ կարելի է ստանալ նրա բազմակողմանի դիտարկումներով, համեմատություններով, փորձերով, չափումներով, օգտագործելով գիտագործնական միջոցներ ու հնարավորություններ, ինչպես նաեւ այդ թեմայում եղած եւ նրան առընչվող այլ տեսական նյութերը վերստին, ավելի խորը, մանրամասն վերլուծելով եւ հնարավոր ավելի ճիշտ հետեւություններ ու եզրակացություններ անելով,որը փորձում ենք այս հոդվածում:

Ավագ դպրոցի ֆիզիկայում այս թեման սովորողների համար թերեւս ամենաբարդերից է: Կան որոշ վարկածներ միայն՝ ձգողությունն իրականացվում է գրավիտոնների միջոցով, որոնք հայտնաբերված չեն կամ հարաբերականության ընդհանուր տեսությունը բոլորի կողմից ընդունված է՝ որպես ընդհանուր ձգողության ժամանակակից տեսություն (*«ֆիզիկա -10»*, եւ *«ֆիզիկա -12»* նախկին գրքերում, ձգողության ուժի բանաձեւի արտածումն է), իսկ երեւույթի ներքին բնույթի մասին ոչ մի բառ: Կավենդիշի հայտնի փորձի բացատրությունը, մոտավորությունների առաջացման պատճառները, նյութի ներքին կառուցվածքի եւ այլ խնդիրներ որոշակիորեն կապվում են այդ երեւույթի հետ, թվում է՝ այն ընկած է բնության հիմքում եւ ամեն ինչ հասկանալու բանալին է:

Միաժամանակ պետք է նկատի ունենալ, որ շարժումը միայն ձգողությամբ բացատրելը անհասնելի կլինի սովորողներին, քանի որ զանգվածները, վերջիվերջո, կարող են խտանալ եւ կանգ առնել:

Ծագում է նաեւ վանողական ուժերի գաղափարը ինչպես տարբեր էլեկտրական լիցքերի դեպքում: Սակայն, թվում է, խնդիրը լուծելու համար ունենք բոլոր անհրաժեշտ պայմանները, միայն պետք է նաեւ ինչ-որ ձեւով պատկերացնենք նյութը, նրա մոտավոր տեսքը, հատկությունները: Դրա համար կատարենք որոշակի դիտումներ եւ համեմատություններ:

* * *

Էլեկտրոնային ճառագայթներն անդրադառնում եւ խոշորացնում են նյութի (ատոմի) համեմատաբար խիտ տիրույթները,մյուսներով անցնում են: Ավելի թափանցող ճառագայթների դեպքում (ռենտգենյան), կդիտվեր նույն ընթացքը եւ նման պատկերը, այսպես անվերջ...: Չկան վերջնական, միանման, հստակ, նույն չափերով խիտ տիրույթներ (նյութի հատիկներ) եւ դատարկ տիրույթներ (միջակայքեր), չկան համապատասխան ճառագայթներ (քվանտներ): Համեմատելի պարամետրերի սահմաններում բոլորը խառնվում, միաձուլվում են, ինչպես միասնական կառուցվածք, եւ չեն տարբերվում:

Մեր պատկերացումներում չտեղավորվող տիեզերական աներեւակայելի զանգվածների համեմատ մեր գալակտիկան դաշտ է, արեգակնային համակարգությունը գալակտիկայի համեմատ դաշտ է, մոլորակները եւ արբանյակները արեգակնային համակարգի համեմատ դաշտեր են, մոլեկուլները եւ ատոմները մոլորակների եւ արբանյակների համեմատ դաշտեր են տարրական մասնիկները ատոմի եւ միմյանց համեմատ դաշտեր են, այսպես անվերջ: Բոլորը նման են միմյանց, նյութի հարաբերական խտացումներն են, մեկը մյուսի մեջ եւ նրա կրկնությունը, բացի չափերից, (0, ∞) սահմաններում (նկ.1ա):



նկ.1ա

Տարածության մեջ դրանք պետք է դիտարկել պրոյեկցիաներով (նկ.1բ):



նկ.1բ
Մատերիայի մտավոր մատչելի տեսքը մեր պատկերացումներով

Դրանք (համարենք անկենդան նյութի խտացումներ) նման են կոացերվատներին, Կենսաբանության մեջ, որոնք առաջանում են այնպիսի խիտ, լիցքավորված նյութի ուղղորդված շարժումով, ինչպիսին էլեկտրական հոսանքն է եւ որոնցից էլ ծագում է կյանքը: Դա հաստատում է այս աշխարհում բոլոր կենդանի եւ անկենդան կառույցների նույն հիմքի վրա լինելը:

Իրականությունը տարբերող մեր զգայարանների հնարավորությունները՝ տեսողություն՝ $\lambda=0,76.10^{-6}$*մ*÷$0,38.10^{-6}$*մ*, ձայնային՝ $\nu=(16000$*Հg*÷20000*Հg*) շոշափելիքի, հոտառության, համի եւ այլն, խիստ սահմանափակ են: Չափիչ, խոշորացնող սարքերի հնարավորությունները նույնպես սահմանափակ են եւ (0, ∞) սահմաններում բոլորը ցույց չեն տալիս: Մենք գտնվում ենք ինչ-որ C տիրույթում (նկ.1ա), եւ անվերջ տարածությունը լցնող նյութը իր անթիվ հատկություններով ամբողջությամբ մատչելի չէ, այլ մասամբ:

Այսպիսի եւ նման շատ համեմատություններով, դատողություններով հանգում ենք ուրիշ ոչ մի բանի հետ չհամեմատվող (այդպիսին չկա), դրանով իսկ չճանաչվող, ամեն ինչի սկիզբը եւ վերջը հանդիսացող նախանյութի՝ մատերիայի գոյությանը:

Այս աշխարհը նկարագրող հիմնական ֆիզիկական մեծությունները եւ պարամետրերը մեր կարծիքով հանդիսանում են հեռավորությունը (տարածություն), զանգվածը (մատերիա), ժամանակը (շարժում, ընթացք), իսկ ֆիզիկայում որեւէ խնդիր քննարկելը ավելի հարմար կլինի, եթե ընդունենք կանխադրույթներ.

1. Գոյություն ունի եռաչափ անսահման տարածություն, լցված մատերիայով (ստեղծող նյութ), որն անընդհատ շարժվում է եւ փոփոխվում:

2. Մեր զգայարաններով, չափիչ սարքերով, այլ միջոցներով ու հնարավորություններով գտնվում ենք նրա անվերջ շարժման, փոփոխությունների, անթիվ հատկությունների ընկալման եւ ճանաչման փոքր տիրույթում:

Ուսումնասիրենք տարածությունը կամայապես լցնող դաշտերի, մասնիկների, տարբեր չափերի ու խտությունների զանգվածների միջեւ գրավիտացիոն փոխազդեցություններից հիմնականը՝ ձգողությունը եւ դրա հետեւանքով շարժումը որեւէ ուղղությամբ:

Դիցուք m_1 եւ m_2 զանգվածներով մարմինները տարածության մեջ փոխադարձ ձգողությամբ շարժվելով գրավել են ընթացիկ 1 եւ 2 դիրքերը՝ r հեռավորությամբ (նկ.2).



նկ.2

Դիտարկելով որպես նյութական կետեր՝ քննարկենք նրանց շարժումները առանձին-առանձին, համաձայն շարժումների անկախության սկզբունքի:

Ենթադրենք m_2 զանգվածը աջ կողմից, անվերջությունից, m_1-ի ձգողական դաշտում շարժվելով գրավել է նրանից r հեռավորության վրա 2 ընթացիկ դիրքը:

Ձգողության (փոխազդեցության) ուժը համաձայն ընդունված բանաձեւի՝

$$F = G\frac{m_1 m_2}{x^2} \quad [4.30]$$

Կատարված աշխատանքը եւ դրա հաշվին m_2 զանգվածի ստացած պոտենցիալ էներգիան [1.35]՝

$$E_{պ_2} = A = \int_{\infty}^{r} F dx = \int_{\infty}^{r} G\frac{m_1 m_2}{x^2} dx = G\, m_1 m_2 \int_{\infty}^{r} \frac{1}{x^2} dx = G\, m_1 m_2 \left(-\frac{1}{x}\right)\Big|_{\infty}^{r} =$$

$$= G m_1 m_2 \left(-\frac{1}{r} + \frac{1}{\infty}\right) = -G\frac{m_1 m_2}{r} + 0$$

$$E_{պ_2} = -G\frac{m_1 m_2}{r} \quad [4.36]$$

Այս էներգիան բաղկացած է երկու բաղադրիչներից՝մեկը m_1-ի (դաշտի), մյուսը՝ այնտեղ շարժվող m_2 զանգվածի:

Գրավիտացիոն դաշտը պոտենցիալային է: Այնտեղ շարժվող m_2 զանգվածի պոտենցիալ $E_{պ_2}$ էներգիան որոշվում է նրա զանգվածով եւ դաշտում ընթացիկ 2 դիրքով, իսկ $\varphi_2 = \frac{E_{պ_2}}{m_2}$ պոտեցիալը m_2 զանգվածի միավորին ընկնող (դաշտի կողմից տրված) տեսակարար էներգիան է, դաշտի էներգետիկական ցուցանիշը, նրա կարողությունը այդ դիրքում, կախված չէ m_2-ից: Քանի որ այդ բաժանումով m_2-ի վրա կրճատեցինք եւ անջատեցինք նրա բաղադրիչը այդ էներգիայից. մնացածը որոշվում է միայն m_1-ով (դաշտով) եւ ընթացիկ 2 դիրքով՝ նրանից r հեռավորությունով:

$$\varphi_2 = \frac{E_{պ_2}}{m_2} = -G\frac{m_1}{r} \quad [5.30]$$

m_1 զանգվածի շարժումը ձախ կողմից, անվերջությունից, m_2-ի ձգողական դաշտում ընթանում է նույն ձեւով.

$$E_{պ_1} = A = \int_{\infty}^{r} F dx = \int_{\infty}^{r} G\frac{m_1 m_2}{x^2} dx = -G\frac{m_1 m_2}{x}\Big|_{\infty}^{r} = -G\frac{m_1 m_2}{r} - \left(-G\frac{m_1 m_2}{\infty}\right) =$$

$$= -G\frac{m_1 m_2}{r} + 0 = -G\frac{m_1 m_2}{r}$$

$$E_{պ_1} = -G\frac{m_1 m_2}{r}$$

m_2 դաշտի պոտենցիալը 1 դիրքում՝ նրանից r հեռավորության վրա

$$\varphi_1 = \frac{E_{պ_1}}{m_1} = -G\frac{m_2}{r} \quad [2.41]$$

շարունակությունը՝ էջ 10

Ձգողություն, մատերիա, շարժում

սկիզբը՝ էջ 9

Հետագա շարժումն այս ընթացիկ 1 եւ 2 դիրքերից տեղի կունենա, կշարունակվի, եթե պոտենցիալների տարբերությունը նրանց միջեւ |Δφ|>0;

1-2 ուղղությամբ ունենք՝ $\Delta\varphi_{12} = \varphi_1 - \varphi_2 > 0$

$$\Delta\varphi_{12} = -G\frac{m_2}{r} - \left(-G\frac{m_1}{r}\right) = G\frac{m_1}{r} - G\frac{m_2}{r} = \frac{G}{r}(m_1 - m_2) = \frac{G}{r}\Delta m_{12}$$

(նկատենք, որ $\frac{m_1}{r}$ և $\frac{m_2}{r}$ գծային խտություններն են)

$$\Delta\varphi_{12} = \frac{G}{r}\Delta m_{12} > 0$$

G մեծությունը հաստատուն է, հեռավորությունը շարժման պատճառ չէ (այլ ընդհակառակը):

$\Delta\varphi_{12}$ կախված է միայն $\Delta m_{12}>0$ տարբերությունից, $\Delta m_{12}=m_1-m_2>0 \Leftrightarrow m_1>m_2$:

Սա նշանակում է, որ 1 դիրքում, նրա փոքր ծավալում (նյութական կետ) զանգվածը (մատերիա) ավելի շատ է կուտակված, քան նույնպիսի, բացարձակորեն համարժեք 2 դիրքում m_2 զանգվածը, այսինքն՝ ավելի խիտ է: ($m_1>m_2 \Leftrightarrow p_1v>p_2v \Leftrightarrow p_1>p_2$) [4.34]

2-1 ուղղությամբ շարժում տեղի կունենա, կշարունակվի եթե՝

$$\Delta\varphi_{21} = \varphi_2 - \varphi_1 > 0$$

$$\Delta\varphi_{21} = -G\frac{m_1}{r} - \left(-G\frac{m_2}{r}\right) = G\frac{m_2}{r} - G\frac{m_1}{r} = \frac{G}{r}(m_2 - m_1) = \frac{G}{r}\Delta m_{21} > 0$$

$\Delta\varphi_{21}$ կախված է միայն $\Delta m_{21}>0$ տարբերությունից.

$\Delta m_{21}=m_2-m_1>0 \Leftrightarrow m_2>m_1$ այսինքն զանգվածը (մատերիա) 2 դիրքում ավելի շատ է կուտակված, քան նույնպիսի, բացարձակորեն համարժեք 1 դիրքում m_2-ը, այսինքն՝ ավելի խիտ է: Պոտենցիալների հավասարության դեպքում $\Delta\varphi=0 \Leftrightarrow \Delta m=0 \Leftrightarrow m_1=m_2$ այսինքն երկու դիրքերում էլ խտությունները նույնն են, շարժում չկա, կարճատեւ հարաբերական դադար: Այսպես տեղի է ունենում տարածության բոլոր ուղղություններով:

Նշանակում է ոչ մի ձգողականություն չկա: Զանգվածները մատերիայի հարաբերական խտացումներ են, տարածության մեջ ինչպես միգամածություններ, չունեն որոշակի սահմաններ, անընդհատ նվազող խտություններով տարածվում են անվերջության մեջ (նկ.3ա):



նկ. 3ա

նկ. 3բ

Իսկ շարժումը՝ դրանց հարաբերական տեղաշարժն է, (նկ.3բ) որի ընթացքում ավելի խիտը լցվում է նոսրի մեջ [3.39] N5.5 եւ շրջափակվում նրանով (նկ.4):



նկ.4

Առաջանում են գրավիտացիոն ալիքներ, միեւնույն ձեւով տարածության երեք ուղղություններով, գազերի (ինչպես ամպերի), հեղուկների, տարբեր չափերի ու խտությունների մասնիկների ու զանգվածների նման (նկ.5):



նկ.5

Մատերիայի այդպիսի շարժումով եռաչափ տարածության մեջ ստեղծվում եւ բացատրվում է ամեն ինչ: Իսկ ո՞վ է ստեղծել դրանք եւ սկիզբ դրել շարժմանը՝ իմանալ անհնար է եւ անիմաստ:

* * *

Տարածության մեջ խիտ եւ նոսր մատերիայի հարաբերական շարժման միակ, առավել պարզ օրենքով ստեղծվում է բնության ողջ բազմազանությունը: Դա ցույց է տալիս որ այն կարող է լինել կամ հանդիսանալ հիմնական էլեմենտը եւ կապող օղակը բազմաթիվ եւ ավելի բարդ այլ օրենքների կառուցվածքներում:

Բնության օրենքը եւ երեւույթը ներառում են նրա հիմնական բաղադրիչները՝ տարածությունը, մատերիան տարբեր խտություններով, շարժումը ոչ թե առանձին-առանձին, երբ հարաբերական են, այլ նրանց միասնությունը, որի դեպքում ունեն բացարձակ գոյության հավակնություն:

Օգտագործված գրականություն ցանկ

1. Ռ. Գ. Գեւորգյան, Վ. Վ. Շեպել, Ընդհանուր ֆիզիկայի դասընթաց, Երեւանի պետական համալսարանի հրատարակչություն (ռուսերենից՝ հայերեն թարգմանություն), Երեւան 1970, 770 էջ

2. Ի. Վ. Սավելեվ, Ընդհանուր ֆիզիկայի դասընթաց, 2-րդ հատոր (ռուսերենից՝ հայերեն թարգմանություն), *«Լույս»* հրատարակչություն, Երեւան 1970, 527 էջ

3. Д. И. Сахаров, «Сборник задач по физике», Издательство «Наука», МОСКВА 1973, 288 էջ

4. Н.И.Кошкин и Г.Ширкевич, «Справочник по элементарной физике», Издательство «Наука», Главная редакция физико-математической литератури, Москва 1975, 256 էջ

5. Р. В. Телеснин и В. Ф. Яковлев, «Курс физики», Электричество, Издателство «Просвещение», МОСКВА-1970, 488 էջ

Վ. ԱԼՈՅԱՆ
ՀՀ Գեղարքունիքի մարզի
Երանոս գյուղի հ. 2 միջնակարգ դպրոցի
Ֆիզկայի ուսուցիչ

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ *«Երեւանի Նվեր Սաֆարյանի անվան հ 164 հիմնական դպրոց»* ՊՈԱԿ-ի դասվարի (ռուսերենով ուսուցմամբ, 18 դասաժամ), հայոց լեզվի եւ գրականության (6 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,

- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

- անձը հաստատող փաստաթուղթ,

- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

- ինքնակենսագրություն (Ձեւ 5),

- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,

- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընունվում են ***մինչեւ հունիսի 4-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00-ից 14:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:***

Մրցույթը տեղի կունենա ***հունիսի 11-ին՝ ժամը 11:30-ին,*** Երեւանի Նվեր Սաֆարյանի անվան հ 164 հիմնական դպրոցում, հասցեն՝ ք. Երեւան, Նոր Նորքի 2-րդ զանգված, Թոթովենցի 7:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (010) 62-95-80 հեռախոսահամարով:

Փորձի՛ր լրացնել

Բազմապատկի՛ր գիտելիքդ



Ուղղահայաց

1. Ժողովրդական թատրոնի եւ գրականության տեսակ, 14-16-րդ դարերում, արեւմտա-եվրոպական երկրներում: **2.** Զրվեժ Ֆրանսիայում: **3.** Միջնադարյան հայ բանաստեղծ: **4.** Ֆրանսիացի կոմպոզիտոր, *«Ռոմեո եւ Ջուլիետ»* օպերայի հեղինակ՝ Շառլ…: **6.** Մեծանուն կոմպոզիտոր Արամ Խաչատրյանի բալետներից: **8.** Նեղուց, որ միացնում է Էգեյան ծովը Մարմարի ծովի հետ: **9.** Հայ ժողովրդի նախահայր Հայկի հայրը: **11.** Զանգվածի չափման միավոր, ոսկու մաքրության չափման միավոր(0,2գրամը): **13.** Հայ լեզվաբան, տպագրիչ(1614-1674թթ)՝ … Երեւանցի: **19.** Ռուսաստանի Դաշնության ներկայիս օրենսդիր մարմինը: **21.** Օլիմպիական խաղերի կրկնակի չեմպիոն(1956թ, 1964թ)՝ …Նովիկով: **22.** Ինքնիշխան պետություն, որը տեղակայված է Հռոմ քաղաքում. այն աշխարհում ամենափոքր պետությունն է ե՛ւ տարածքով (44 հեկտար) ե՛ւ բնակչությամբ (1000 բն.): **24.** Միջնադարյան հայկական վանք Դեբեդ գետի ձորալանջին: **30.** Հայաստանի պատմական մայրաքաղաքներից, որի հիմնադիրն է Խոսրով Կոտակ Գ թագավորը: **32.** Կնոջ անուն: **33.** Հանրահայտ թեք աշտարակի քաղաքը Իտալիայում: **38.** *«Քրիստոսի հայտնությունը ժողովրդին»* նկարի հեղինակը: **39.** Պարկավոր արջ: **40.** Գրական ժանր: **42.** Էստոնիայի Տարտու քաղաքի նախկին անվանումը, որի նշանավոր համալսարանի պրոֆեսորն էր Պարրոտը: **47.** Հայկական ամսանուն (մարտի 9 - ապրիլի 7): **49.** 89-րդ Թամանյան դիվիզիայի հրամանատար(անունը): **50.** Պոլսահայ լրագրող, ով 1996-2007թթ. եղել է *«Ակոս»* ամսաթերթի գլխավոր խմբագիրը: **51.** Ամենամեծ աշխարհամասը:

Հորիզոնական

5. Նորվեգացի նշանավոր երգահան, կոմպոզիտոր (1843-1907)՝ Էդվարդ …: **7.** Պարսիկ նշանավոր բանաստեղծ, *«Շահնամե»* պոեմի հեղինակը: **9.** Ազգությամբ վրացի(մայրը՝ հայուհի) ռուսաստանաբնակ հեռուստահաղորդավարուհի, լրագրող՝ … Կանդելակի: **10.** Շինանյութ, որի արտադրության հիմնական բաղադրիչներն են սոդան եւ ավազը: **12.** Ֆրանսիացի գրող, *«Ինքնակոչ Թոմասը»* վեպի հեղինակ՝ Ժան …: **14.** Կղզի Հունաստանում, որի մասին Նապոլեոնը ասել է. *«Ամենամեծ դժբախտությունն ինձ համար … կղզու կորուստն էր»:* **15.** Ֆրանսիացի կոմպոզիտոր, *«Ժիզել»* բալետի հեղինակը: **16.** Այդպես են անվանում քեռու որդուն: **17.** Հայ արձակագիր Մովսես Հարությունյանի գրական ծածկանունը: **18.** Հայ ազգային-ազատագրական շարժման գործիչ, ռազմական եւ պետական գործիչ. *«Չմնաց, աշխարհում գրեթե չմնաց մի ցեղ, որ մեր բազկի ուժը չզգար»* խոսքերի հեղինակ: **20.** Շվեցարացի գրող (1821-1881)՝ Անրի …: **23.** Նապոլեոնի ձիու անվանումը: **25.** Հայ հանճարեղ կոմպոզիտոր, երաժշտագետ, խմբավար, ով աքսորի ճանապարհին կորցրեց մտավոր հավասարակշռությունը եւ մինչեւ կյանքի վերջ չապաքինվեց: **26.** Բարձունք Երուսաղեմում, որտեղ, ըստ Աստվածաշնչի, խաչվել է Քրիստոսը: **27.** Կուլյս համստեղության ամենապայծառ աստղը: **28.** Պետություն, որի *«Սան Ալֆոնսո Դել»* առողջարանում է գտնվում աշխարհի ամենամեծ լողավազանը (երկ.՝ 1կմ, մակերեսը 8 հա): **29.** Եվ մոլորակի եւ քիմիական տարրի անվանում: **31.** Աշխարհի ամենաթանկ (30.000 000 դոլար) *«Ե՞րբ դու կամուսնանաս»* նկարի հեղինակ՝ Պոլ …: **34.** Հիտլերի թիվ մեկ թշնամին՝ Յուրի …: **35.** Հյուսիսային Սառուցյալ օվկիանոսը, նրա կղզիները եւ Եվրոպայի, Ասիայի ու Ամերիկայի հյուսիսային ծայրամասերը միասին: **36.** Ծաղկատեսակ: Թութանհամոնի դամբարանում գտած ծաղկեպսակը հյուսված էր այդ ծաղկից: **37.** 5-րդ դարի հայ մատենագիր՝ … Կողբացի: **41.** Ամերիկացի գրող եւ պատմաբան. *«Իշխանության հասած ընկերը կորած ընկեր է»* աֆորիզմի հեղինակը: **43.** Հայոց թագուհի. *«Աշխարհին ու մարդկանց … անունով ներկայացա, որպես կին, բայց ուսերիս վրա կրեցի յոթ տղամարդ արքայի բեռ»* խոսքերի հեղինակը: **44.** Գերմանացի փիլիսոփա (1730-1788), *«Հայրենիքը մոռանալ անհնար է: Չկա ավելի ազնիվ հիվանդություն, քան կարոտն առ հայրենիք»* աֆորիզմի հեղինակը: **45.** Երկարության չափման հին միավոր, 0,711 մետրի անվանումը: **46.** Աֆրիկայի ամենամեծ պետությունը: **48.** Թագավորի ժառանգական տիրույթների ընդհանուր անվանումը հին Հայաստանում: **50.** Պետություն Հյուսիսային Եվրոպայում: **52.** Ավանդ բառի հոմանիշներից: **53.** Իտալացի հայտնի կոմպոզիտոր (1678-1741)՝ Անտոնիո …, նրա օպերաներից է *«Տիգրան»* օպերան: **54.** Գավառ Մեծ Հայքի Վասպուրական նահանգի կազմում:

Կազմեց Վոլոդյա ՆԻԿՈՂՈՍՅԱՆԸ

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ *«Երեւանի Ն. Գոգոլի անվան h 35 հիմնական դպրոց»* ՊՈԱԿ-ի աշխարհագրության (20 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,

- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

- անձը հաստատող փաստաթուղթ,

- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

- ինքնակենսագրություն (Ձեւ 5),

- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,

- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընունվում են ***մինչեւ հունիսի 4-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00-ից 14:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:***

Մրցույթը տեղի կունենա ***հունիսի 5-ին՝ ժամը 13:00-ին,*** Երեւանի Ն. Գոգոլի անվան h 35 հիմնական դպրոցում, հասցեն՝ ք. Երեւան, Էրեբունի 16:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (010) 45-21-01 հեռախոսահամարով:

«Կրթություն» շաբաթաթերթի՝ թիվ 16 համարի խաչբառի պատասխանները

Ուղղահայաց

1. Ժորժ, **2.** Անյա, **4.** Նագան, **5.** Մարագ, **7.** Իգիթ, **9.** Ոստանիկ, **10.** Ալափարս, **13.** Ակռա, **14.** Գայլ, **17.** Աշխաբադ, **18.** Արքիմեդ, **20.** Փարվանա, **21.** Սողոմոն, **22.** Բրունո, **31.** Զարզանդ, **32.** Նիկե, **33.** Աձիք, **34.** Նազարեթ, **38.** Ասլան, **39.** Բջնի, **40.** Սիփան, **42.** Արեգ, **44.** Լյուկ:

Հորիզոնական

3. Մորգան, **5.** Մամոնտ, **6.** Ազիզա, **8.** Ադաժիո, **10.** Արարատ, **11.** Պլատին, **12.** Գլաձոր, **15.** Կոնյակ, **16.** Անգարա, **17.** Ատակամա, **19.** Լեփսիուս, **23.** Սաքո, **24.** Գրամ, **25.** Առակ, **26.** Բուշ, **27.** Զոլա, **28.** Համո, **29.** Կանտ, **30.** Դրեզդեն, **33.** Անանյան, **35.** Ներու, **36.** Գզիր, **37.** Օկտավա, **40.** Սարմեն, **41.** Բուզանդ, **43.** Թելման, **45.** Ադիգա, **46.** Դելֆին, **47.** Նեպտուն:

Սարդարապատ

Խոսքը Պարույր ՍԵՎԱԿԻ, երաժշտությունը Էդգար ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

Երբ չի մնում ելք ու ճար,
Խենթերն են գտնում հնար,
Այսպես ծագեց, արեգակեց
Սարդարապատի մարտը մեծ:

Կրկներգ - Զանգե՛ր, ղողանջեք,
Սրբազան քաջերին կանչեք
Այս արդար պատից:
Սերունդնե՛ր, դուք ձեզ ճանաչեք
Սարդարապատից:

Ավարայրից ջանք առանք,
Այստեղ մի պահ կանգ առանք,
Որ շունչ առած շունչներս տանք
Սարդարապատի պատի տակ:

Կրկներգ - Զանգե՛ր, ղողանջեք,
Սրբազան քաջերին կանչեք
Այս արդար պատից:
Սերունդնե՛ր, դուք ձեզ ճանաչեք
Սարդարապատից:

Բայց մենք չընկանք, մենք միշտ կանք,
Մենք չհանգանք՝ դեռ կգանք,
Երբ տան զանգը, ահազանգը,
Որ մեր հոգու պարտքը տանք:

Կրկներգ - Զանգե՛ր, ղողանջեք,
Սրբազան քաջերին կանչեք
Այս արդար պատից:
Սերունդնե՛ր, դուք ձեզ ճանաչեք
Սարդարապատից:





շարունակությունը՝ էջ 13

Սարդարապատ

սկիզբը՝ էջ 12



Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Վայոց ձորի մարզի *«Մարտիրոսի միջնակարգ դպրոց»* ՊՈԱԿ-ի աշխարհագրության (10 դասաժամ), բնության (2 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,

- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

- անձը հաստատող փաստաթուղթ,

- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

- ինքնակենսագրություն (Ձեւ 5),

- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,

- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընունվում են ***մայիսի 31-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:***

Մրցույթը տեղի կունենա ***հունիսի 5-ին՝ ժամը 14:00-ին,*** ՀՀ Վայոց ձորի մարզի Մարտիրոսի միջնակարգ դպրոցում:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (094) 60-88-93 հեռախոսահամարով:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Տավուշի մարզի *«Ազատամուտի միջնակարգ դպրոց»* ՊՈԱԿ-ի ֆիզկուլտուրայի (10 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,

- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

- անձը հաստատող փաստաթուղթ,

- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

- ինքնակենսագրություն (Ձեւ 5),

- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,

- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընունվում են ***մայիսի 22-ից մինչեւ հունիսի 5-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 13:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:***

Մրցույթը տեղի կունենա ***հունիսի 11-ին՝ ժամը 12:00-ին,*** ՀՀ Տավուշի մարզի Ազատամուտի միջնակարգ դպրոցում, հասցեն՝ գ. Ազատամուտ, Լ. Աղբալյան փ. 2:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (077) 45-65-26 հեռախոսահամարով:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ *«Երեւանի Գալինա Ստարովոյտովայի անվան h 177 հիմնական դպրոց»* ՊՈԱԿ-ի դասվարի (17 դասաժամ), անգլերենի (7 դասաժամ), ռուսաց լեզվի (39 դասաժամ), պատմության (9 դասաժամ), Հայոց եկեղեցու պատմության (11 դասաժամ), ֆիզկուլտուրայի (19 դասաժամ), տեխնոլոգիայի (տղաների խումբ՝ 3 դասաժամ, աղջիկների խումբ՝ 8 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,

- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

- անձը հաստատող փաստաթուղթ,

- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

- ինքնակենսագրություն (Ձեւ 5),

- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,

- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընունվում են ***մինչեւ հունիսի 3-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00-ից 14:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:***

Մրցույթը տեղի կունենա ***հունիսի 6-ին՝ ժամը 11:00-ին,*** Երեւանի Գալինա Ստարովոյտովայի անվան h 177 հիմնական դպրոցում, հասցեն՝ ք. Երեւան, Ավան, Դուրյան 24:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (010) 61-81-21 հեռախոսահամարով:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Արմավիրի մարզի *«Շահումյանի միջնակարգ դպրոց»* ՊՈԱԿ-ի ֆիզկուլտուրայի (5 դասաժամ), քիմիայի (10 դասաժամ), կենսաբանության (10 դասաժամ), բնության (2 դասաժամ), բնագիտության (2 դասաժամ), ռուսաց լեզվի (5 դասաժամ), ինֆորմատիկայի (7 դասաժամ), ֆիզիկայի (10 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,

- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

- անձը հաստատող փաստաթուղթ,

- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

- ինքնակենսագրություն (Ձեւ 5),

- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,

- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընունվում են ***մինչեւ հունիսի 4-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:***

Մրցույթը տեղի կունենա ***հունիսի 6-ին՝ ժամը 14:00-ին,*** ՀՀ Արմավիրի մարզի Շահումյանի միջնակարգ դպրոցում, հասցեն՝ գ. Շահումյան, Ի. Հարությունյան 1 փակուղի, շ. 4:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (093) 84-56-57 հեռախոսահամարով:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Շիրակի մարզի *«Արեւիկի միջնակարգ դպրոց»* ՊՈԱԿ-ի ռուսաց լեզվի (25 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,

- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

- անձը հաստատող փաստաթուղթ,

- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

- ինքնակենսագրություն (Ձեւ 5),

- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,

- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընունվում են ***մինչեւ հունիսի 3-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:***

Մրցույթը տեղի կունենա ***հունիսի 5-ին՝ ժամը 14:00-ին,*** ՀՀ Շիրակի մարզի Արեւիկի միջնակարգ դպրոցում, հասցեն՝ գ. Արեւիկ, փ. 1/4:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (093) 72-72-56 հեռախոսահամարով:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Արարատի մարզի *«Գոռավանի միջնակարգ դպրոց»* ՊՈԱԿ-ի ինֆորմատիկայի եւ ԹԳՀԳ-ի (10 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,

- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

- անձը հաստատող փաստաթուղթ,

- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

- ինքնակենսագրություն (Ձեւ 5),

- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,

- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընունվում են ***մայիսի 22-ից մինչեւ հունիսի 5-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:***

Մրցույթը տեղի կունենա ***հունիսի 12-ին՝ ժամը 14:00-ին,*** ՀՀ Արարատի մարզի Գոռավանի միջնակարգ դպրոցում:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (093) 12-55-14 հեռախոսահամարով:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ *«Երեւանի Ա. Հովհաննիսյանի անվան h 194 հիմնական դպրոց»* ՊՈԱԿ-ի ֆիզկուլտուրայի (22 դասաժամ), մաթեմատիկայի (10 դասաժամ), ինֆորմատիկայի (8 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,

- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

- անձը հաստատող փաստաթուղթ,

- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

- ինքնակենսագրություն (Ձեւ 5),

- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,

- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընունվում են ***մինչեւ հունիսի 6-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:***

Մրցույթը տեղի կունենա ***հունիսի 12-ին՝ ժամը 14:30-ին,*** Երեւանի Ա. Հովհաննիսյանի անվան h 194 հիմնական դպրոցում, հասցեն՝ ք. Երեւան, Նոր Արեշ, փ. 7, շ. 1:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (010) 45-39-20 հեռախոսահամարով:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Արարատի մարզի *«Նորաբացի Միսակ Ապելյանի անվան միջնակարգ դպրոց»* ՊՈԱԿ-ի ինֆորմատիկայի (8 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,

- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

- անձը հաստատող փաստաթուղթ,

- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

- ինքնակենսագրություն (Ձեւ 5),

- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,

- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընունվում են ***մինչեւ հունիսի 4-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:***

Մրցույթը տեղի կունենա ***հունիսի 7-ին՝ ժամը 14:00-ին,*** ՀՀ Արարատի մարզի Նորաբացի Միսակ Ապելյանի անվան միջնակարգ դպրոցում:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (094) 23-80-80, (0236) 6-26-49 հեռախոսահամարներով:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Շիրակի մարզի *«Փոքր Սարիարի միջնակարգ դպրոց»* ՊՈԱԿ-ի դասվարի (22 դասաժամ), ռուսաց լեզվի (24 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,

- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

- անձը հաստատող փաստաթուղթ,

- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

- ինքնակենսագրություն (Ձեւ 5),

- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,

- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

